ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԱԽԱՏԱՆՔ

ԽՈՒՄԲ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ՝ ՈՐՈՇՉԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ «ԱՆԼՌԵԼԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ» ՊՈԵՄՈՒՄ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՆԱԻՐԻ

ՀԵՐՀԵՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԿՈՍՅԱՆ ԼԻԼԻԹ

ԵՂԵԳՆԱՁՈՐ 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Որոշիչ թեման, ինչպեսև *Նախադասության անդամներ* թեման ընդհանրապես, այսօրվա դպրոցական ծրագրերում ու դասագրքերում շատ հպանցիկ է ներկայացված (միայն 8-րդ դասարանի ծավալով), մինչդեռ գործող և հաջորդ տարվանից կիրառելիք չափորոշիչները շատ ավելին են պահանջում, քան այն, ինչը մատուցվում ու պահանջվում է այսօր: Հատկանշական է նաև, որ ավարտական (միասնական) քննությունների մակարդակում նախադասության շատ անդամներ ճանաչելը, դրանք մեկը մյուսից տարորոշելը բավականաչափ կարևորվում է, իսկ այսօրվա ծրագիրը և հատկապես դասագրքերը ոչ միայն չեն խթանում սովորողի պրոբլեմային ու ստեղծագործական մտածողությունը, այլև հաճախ սառեցնում-ձնախեղում են աշակերտների (ապագա ուսանողների ու մասնագետների) եռանդն ու ցանկությունը՝ նորություններ հայտնաբերելու, վիճելի հարցերում իրենց տեսակետները պնդելու, վերջապես՝ սեփական դիրքորոշումն արտահայտելու և դրանով իսկ ինքնահաստատվելու՝ մարդու զարգացման, մարդ դաստիարակելու տեսանկյունից անչափ կարևոր պրոցեսը:

Այդ նպատակով ներկայացվող աշխատանքում, *Որոշիչ* թեման Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի միջոցով ուսուցանման եղանակների ու միջոցների ներկայացման հետ միաժամանակ, անդրադարձ ենք կատարել *Գոյականական անդամ, Գոյականական անդամի լրացումներ, Հատկացուցիչ, Բացահայտիչ, Ստորոգելի, Պարագաներ* (մասնավորապես՝ *Ձևի պարագա*) թեմաներին՝ զուգահեռներ տանելով այդ անդամների ու որոշչի տարբերակման խնդիրներին, նաև առաջ քաշելով մեր կողմից արձանագրված հիմնախնդիրներ ու առաջարկելով դրանց լուծման մեր տեսակետները:

Կարևորում ենք նաև, որ սույն աշխատանքը չի կրում միայն ակադեմիական-գիտական բնույթ. կարող է գործածվել հանրակրթության ու բուհական միջավայրերում դասավանդող մասնագետների կողմից, ինչպես և այն հանգամանքը, որ մեր մտահոգությունների կիզակետը ոչ այնքան լեզվական-շարահյուսական իրողություններն են, այլ սովորողը, նրա ինքուրույնությունը, նրա աշխարհայացքի, նրա մեջ իրողություններին քննադատաբար և ոչ ապրիորի մոտենալու կարողության ազատ ձևավորումը:

Աշխատանքում բոլոր մեջբերումներում թեք տառատեսակով գրվում են որոշիչները, նախադասության այլ անդամներ հատուկ ընդգծվում են (ոչ թեք շրիֆտով) միայն այն ժամանակ, երբ այդ անդամների վերաբերյալ խոսք կա:

Հեղինակի նկատառումները, առաջարկությունները սույն աշխատանքում տեղադրված են հիմնական տեքստից ավելի խորք:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԹՆՋՈՒԿՆԵՐ

Սկսենք այն հանգամանքից, որ նախադասության անդամ հասկացությունը ոչ մի կերպ բացատրված չէ դասագրքերում, ծրագրերում և չափորոշիչներում ուղղակի գործածվում է այդ բառակապակցությունը՝ կարծես համոզված լինելով, որ սովորողն ինքնըստինքյան հասկանում է, թե խոսքն ինչի մասին է:

Առարկայական չափորոշիչը հստակ սահմանում է, որ սովորողը պետք է «ճանաչի նախադասության գլխավոր ու երկրորդական անդամները և կիրառի խոսքում»: Հարցն ինքաբերաբար է հնչում՝ ինչե՞ր ճանաչի և կիրառի:

Հարցը հռետորական է, և դրան տրվող յուրաքանչյուր պատասխան դատապարտված է ձախողման, քանի որ կամ պետք է նախադասության անդամներ տերմինը չգործածվի (հապա ինչպե՞ս դրանք անվանել), կամ պետք է նորմալ բացատրվի՝ հուրախություն ուսումնատենչ ու ստեղծագործ երեխաների:

> Ի դեպ երեխաների որոշ ոչ մեծ մասն այդուհանդերձ «հանդգնում է» նման հարցեր տալ ուսուցիչներին, և այստեղ արդեն ուսուցչի անհատական որակներից է կախված՝ ինչպես վարվել՝ կոպտել ու պահանջել ասել, կրկնել այն, ինչ գրված է դասագրքու՞մ, թե՞ համբերատար բացատրել ու հասկանալի դարձնել երևույթը: Բայց այդ դեպքում առաջանում է հաջորդ հարցը. եթե ուսուցիչը պետք է բացատրի, այդ դեպքում ինչու՞ չի կարելի դասագրքում ևս այդպիսի սահմանում արտացոլել:

Իմ կողմից ավելացնեմ, որ նախադասության անդամ հասկացությունը բացատրված-սահմանված չէ նաև բազմաթիվ լեզվագիտական աշխատություններում ու նույնիսկ բուհական դասագրքերում[1]:

Սույն աշխատանքի հեղինակին հաջողվեց նախադասության անդամ հասկացության սահմանում գտնել միայն «Հայրենագիտական բառարան»-ում[2]: Այդ աշխատության մեջ, որպես նախադասության անդամ հասկացության մեկնաբանություն, գրված է հետևյալը.

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ // члены предложения, նախադասության ոլորտում շարահյուսորեն գործառող, այսինքն՝ նրա կազմությանը մասնակցող, կաղապարման տարր հանդիսացող բաղադրիչները՝ բառերն ու բառակապակցությունները[3]:

> Այդտեղ նաև հպանցիկ հղում կա այն մասին, որ «ոչ բոլոր բառերն ու բառակապակցություններն են դառնում նախադասության անդամ»[4]: Դա իհարկե դուրս է մեր հետազոտման նպատակներից, սակայն ուղղակի նշենք, որ դպրոցական ծրագրում և դասագրքերում խոսվում է, թե ո՞ր խոսքի մասերը և նախադասության կառուցվածքի մեջ մտնող ո՞ր բաղադրիչները նախադասության անդամ չեն դառնում, բայց այդ տեղեկությունը տարրալուծված է խոսքի մասերի ողջ տիրույթում, իսկ առանձնացված, որպես առանձին նյութ ներկայացված չէ:

Այս աշխատանքում սահմանման նոր տարբերակ հնարելու փորձ չի կատարվի. պետք է ընդունվի այդպիսի սահմանում-մոտեցումը. ես բնականաբար առաջարկում եմ հենց այս մոդելը իմ սաներին, ինչպես և բոլոր սովորողներին՝ նրանց համար կարևորելով, որ նախադասության անդամը պետք է նախադասության կազմությանը մասնակցի:

---

[1] . Տես՝ օրինակ. Արտաշես Պապոյան, Խաչիկ Բաղիկյան, «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն» , Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2003 թ.:

[2] . Հրանտ Պետրոսյան, «Հայրենագիտական բառարան», Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1987թ.:

[3] . Տես՝ Հր.Պետրոսյանի նշված աշխ., էջ 474:

[4] . Նույն տեղում

Դպրոցական ծրագրում և դասագրքերում նախադասության անդամ հասկացության փոխարեն չի գործածվում պաշտոն հասկացությունը, մինչդեռ փորձից ելնելով՝ հավաստում եմ, որ պաշտոն տերմինը զգալիորեն հեշտացնում է լեզվական այդ իրողության ընկալումը՝ հատկապես ավագ դպրոցում, քանի որ այդ տարիքի աշակերտներն արդեն գաղափար ունեն ձեռնարկատիրության, աշխատանքի ու գործունեության կազմակերպման ձևերի մասին: Ըստ դրա՝ նախադասությունը կարելի է ներկայացնել՝ որպես կազմակերպություն, որտեղ կարևոր են մասնակիցների պաշտոնները: Կա՞ն գլխավոր պաշտոններ, ուրեմն՝ կան նաև նախադասության գլխավոր անդամներ: Կազմակերպության մեջ գլխավորները ի՞նչ են անում: -Ղեկավարում են: Իսկ նախադասության մեջ գլխավորներն ապահովում են նախադասության կարևորագույն հատկանիշներից մեկը՝ ստորոգումը: Կազմակերպության մեջ կա՞ն գլխավորներին ենթարկվող, նրանց հրահանգները կատարողներ:-Կա՜ն: Այդպես էլ նախադասության մեջ կան երկրորդական անդամներ և այլն:

Կարծում ենք՝ տպավորիչ է և ուսանելի:

Աշխատանքի ծավալի պատճառով կանգ չեմ առնի գլխավոր ու երկրորդական անդամների տարբերակման հիմքերի ու առանձնահատկությունների վրա, թեպետ այլ ասպեկտով դեռ առիթ լինելու է՝ խոսելու այդ մասին:

Միանգամից նշենք, թե թեման արտացոլող ինչպիսի հարցերով է առաջնորդվել հեղինակը, ու փորձենք ներկայացնել դրանց վերաբերյալ մեր տեսակետներն ու այդ նյութերի մատուցման մեր մոտեցումները:

- Ի՞նչ է որոշիչը: -Ինչպե՞ս կարող է այն արտահայտվել: -Ինչու՞ է որոշիչը կոչվում գոյականական անդամի լրացում և ոչ թե գոյականի լրացում: -Ինչպե՞ս զանազանել որոշիչը նախադասության այլ անդամներից: -Հնարավո՞ր է Որոշիչ թեման բացահայտել ու ուսուցանել Պ.Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի միջոցով:

Այստեղ միայն նշենք, որ Գոյականական անդամի լրացումները բաժինը դասավանդել սկսելուց առաջ անհրաժեշտ է ստուգել՝ սովորողները հիշու՞մ են, թե ի՞նչ է նշանակում բառի փոխանվանաբար կիրառություն: Եվ եթե այստեղ խնդիրներ կան, ճիշտ կլինի՝ նշված թեման անցնելուց առաջ անդրադարձ կատարվի նշված խնդրին, և առաջ անցնել միայն այն բանից հետո, երբ ուսուցիչը համոզվում է, որ բառերի փոխանվանաբար հանդես գալու երևույթը յուրացված է: Փոխանվանական կիրառության ընկալումը կարևոր է և՛ այլ խոսքի մասերի՝ որպես գոյական հանդես գալու տեսանկյունից, և՛ գոյականի՝ այլ խոսքի մասային (հատկապես՝ ածականական) իմաստներ ձեռք բերելու առումով:

Վերջին պարբերության մեջ պնդվածը սույն աշխատության մեջ կփորձենք հիմնավորել համապատասխան օրինակներով:

ՈՐՈՇԻՉԸ՝ ՈՐՊԵՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

Սովորողները սկսում են հետևյալ դրույթի քննարկումից (նկատի է առնվում, որ արդեն Ենթակա և Ստորոգյալ թեմաները յուրացված են).

-եթե բառը կամ բառակապակցությունը նախադասության անդամ է, և գլխավոր անդամ չէ, ապա այն լրացում է՝ կամ բայական անդամի, կամ գոյականական անդամի: Այստեղ կարևոր է, որ սովորողը կարողանա ընկալել՝ ինչու՞ ոչ ենթակայի կամ ստորոգյալի լրացում, և ինչու՞ ոչ գոյականի կամ բայի լրացում:

Այս առումով պետք է հստակեցնել. ոչ միշտ է ենթակայի դերում հանդես գալիս գոյական կամ առարկայանիշ այլ բառ (բառակապակցություն), և ոչ միշտ է ստորոգյալի պաշտոնով հանդես գալիս դիմավոր բայը: Այսինքն՝ և՛ գոյականական, և՛ բայական անդամի լրացումները կարող են լինել ինչպես ենթակայի, այնպես էլ ստորոգյալի լրացումներ: Բացի դա՝ լրացումներն իրենց հերթին կարող են ունենալ լրացումներ, իսկ

դա նշանակում է, որ պատշաճ չէ լրացումները կոչել ենթակայի կամ ստորոգյալի, թեպետ նախադասության անդամների շարահյուսական վերլուծության՝ գծապատկերով ներկայացնելու դեպքում պարզ է, որ ենթակայից ու ստորոգյալից են կախված լինելու և նրանց են լրացնելու մյուս անդամները, սակայն միջնորդավորված կախում ունենալը չի նշանակում անմիջապես լրացնել:

Ասվածը կարելի է հիմնավորել պոեմից բերվող օրինակով.

Այգիների մեջ թաղված Տաճարի
Գմբեթն է միայն հեռվից երևում
Ծաղկած ծառերի գլխավերևում՝
Անհայտ թռչունի *գլխիվայր շրջված մեծ* բույնի նման[5]: (27)

Գոյականով ու դիմավոր բայով արտահայտված գլխավոր անդամների (գմբեթն է երևում) առանձնացումից հետո պետք է պարզել, որ նախադասության ոչ բոլոր բաղադրիչներն են նախադասության անդամ (միայն վերաբերականը): Ապա առանձնացնել ենթակայի ու ստորոգյալի խմբերը.

* այգիների մեջ թաղված Տաճարի – ենթակայի խումբ

* հեռվից, ծաղկած ծառերի գլխավերևում՝ անհայտ թռչունի գլխիվայր շրջված մեծ բույնի նման – ստորոգյալի խումբ:

Ուշադրություն հրավիրել.

- այգիների մեջ կապական կառույցը լրացնում է թաղված անդամին, վերջինս՝ տաճար(ի) անդամին և միայն այդ անդամն է, որ լրացնում է ենթակային;

- այսինքն՝ ենթակայի խմբի բոլոր լրացումները պարտադիր չէ որ գոյականի (գոյականական անդամի) լրացումներ լինեն, ուստի այգիների մեջ-ը տեղի պարագա է (կողմնակի);

- նույն սկզբունքով մոտենալիս ակնհայտ է դառնում, որ ստորոգյալի խմբի ոչ բոլոր լրացումներն են անմիջապես ստորոգյալի և ընդհանրապես բայական անդամի լրացում (հիշենք, որ ստորոգյալն՝ ինքը, կարող է և բայով արտահայտված չլինել, իսկ այդ դեպքում նրա լրացումը չի կարող բայական անդամի լինել);

- ծաղկած բառը լրացնում է ծառեր(ի) անդամին, վերջինս՝ գլխավերև(ում), և միայն սա է լրացնում ստորոգյալին անմիջապես, և այլն:

Ստացվում է, որ լրացնելու, կախյալ լինելու տեսանկյունից էական է, թե որ բառին(անդամին) է լրացնում խնդրո առարկա անդամը, և միայն լրացյալի արտահայտած իմաստից է ակնհայտ դառնում, թե սա նախադասության (կամ տվյալ կապակցության, մասնավորապես՝ դերբայական դարձվածի կազմի) ինչ անդամ է:

Ուստիև որոշիչը կարող է լինել ոչ միայն ենթակայի, այլև հատկացուցչի, բացահայտչի, խնդիրների, որոշ պարագաների, ինչպեսև ստորոգելիի լրացում: Այստեղ կարևոր է, թե լրացյալը խոսքի ինչ մասով (կամ ինչ խոսքի մասի փոխարեն) է արտահայտված, և ոչ թե՝ նախադասության ինչ անդամ է: Ուրեմն՝ գոյականական անդամի լրացում կոչվելու համար կարևոր է, որ լրացյալը լինի գոյական, առարկայանիշ այլ խոսքի մաս կամ գոյականաբար առնված ցանկացած բառ ու կապակցություն:

Որոշիչ է կոչվում գոյականական անդամի այն լրացումը, որը ցույց է տալիս իր լրացյալի որպիսությունը, քանակային, որակային, չափային, բնութագրական-պրոցեսային և հարակից այլ հատկանիշներ: Որոշիչ ունեցող անդամը (անկախ իր քերականական պաշտոնից) *կոչվում է որոշյալ:*

---

[5] . Պոեմից կատարված մեջբերումները բերված են հետևյալ գրքից. Պարույր Սևակ «Անլռելի զանգակատուն», Երևան, «Խորհրդային գրող», 1990: Փակագծերի մեջ գրված թիվը ցուցանում է տվյալ մեջբերման էջը:

Նշենք, որ 8-րդ դասարանի դասագրքում[6] գրված չէ, թե որոշիչը ինչի (ո՞ր անդամի) հատկանիշ է ցույց տալիս:

Վերևի օրինակում մի քանի որոշիչ է առկա.

- *այգիների մեջ թաղված* դերբայական կապակցությունը տաճարը(ի) անդամի որոշիչն է;

- *ծաղկած* դերբայը ծառերը(ի) անդամի որոշիչն է;

- *անհայտ* ածականը թռչունն(ի) անդամի որոշիչն է;

- *գլխիվայր շրջված* դերբայական դարձվածը և *մեծ* ածականը բույնն(ի) անդամի որոշիչներն են:

Դրանք բոլորն էլ պատասխանում են *ո՞ր* կամ *ինչպիսի՞* հարցերին (որոշիչը բացի այդ հարցերից կարող է պատասխանել նաև *քանի՞*, *ինչքա՞ն*, *ո՞ր ներողդ*, *որքա՞ն* և նման հարցերի), բայց լրացնում են նախադասության տարբեր անդամների՝ հատկացուցչի, ենթակայի և այլն: Հետևաբար որոշիչ թեման ուսումնասիրելու համար կարևորում ենք երեք հանգամանք՝

- ինչպե՞ս, բառային ի՞նչ միջոցներով է արտահայտվում որոշիչը,

- նախադասության ո՞ր անդամին է որոշիչը լրացնում, և ինչպե՞ս կարող է արտահայտվել որոշյալը,

- ինչպիսի՞ հարաբերակցության մեջ կարող են լինել որոշիչն ու որոշյալը, ինչպես նաև նույն որոշյալի տարբեր որոշիչներ՝ միմյանց հետ:

ՈՐՈՇՉԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

Որոշիչը կարող է արտահայտվել.

ա) Ածականով,

ընդ որում՝ և՛ որակական՝ համեմատության բոլոր աստիճաններով, և՛ հարաբերական: Ընդհանրապես՝ ածականի ու թվականի շարահյուսական գերակա դերը որոշիչ լինելն է:

1. Որակական ածական

* դրական աստիճան

Թզուկ ծառերը հեշտ են չորանում
Տաք ու *պաղ* քամուց... (159)

Լրացնում են ենթակային ու պատճառի պարագային[7]:

* բաղդատական աստիճան

- առավելական բաղդատական

Ամենուրեք
Ու հատկապես եկեղեցու բարձր պատից
Կախ է ընկնում սառցի լուլան՝
Մեկը մեկից երկար ու լայն՝
Երեխեքի ախորժակը բաց անելով: (105)

Լրացնում է ենթակային

---

[6] . Հովհաննես Բարսեղյան, Փառանձեմ Մեյթիխանյան «Հայոց լեզու», 8-րդ դասարան, «Աստղիկ գրատուն», Երևան, 2017թ., էջ 93:

[7] Ցանկալի է, որ որոշչի կիրառության յուրաքանչյուր դեպքում նշվի, թե նախադասության որ անդամին է այն լրացնում: Մի քանի տեղ էլ կնշենք, թե որ անդամին է լրացնում, իսկ մնացածների դեպքում, հուսով ենք, օգտագործողները կկարողանան տարբերակել:

Բացվում էին լուսաթաթախ առավոտներ՝
Մեկը մեկից պայծառ ու տաք,
Մեկը մեկից վառ ու հստակ: (170)
Լրացնում է ենթակային:

Ուրիշ *ավելի հանգավոր* բան կա՞: (180)

-Նաև՝ հավասարական բաղդատական.

Գիշերվա կեսին ոռնոցն է լսվում
Հոտ ու նախրի հետ սարից գյուղ իջած *անկուշտ* գայլերի,
Իսկ *նույնքան անկուշտ* ջրաղացների անխոնջ չախչրկան
Կոչնակի նման կանչելով անվերջ՝
Ճամփան է պահում աղունով բարձված սողուն սայլերի: (50)

* գերադրական աստիճան

Սուրբ մատյանից հայ մեղեդու,
Բոլոր էջերն *ամենավառ*
Դարձան մոլի հողմին ավար: (191)

Եվ... մեզանից *ամենամեծ* հաջողակին,
Որ կարող էր Բյուզանդիոնում դառնալ կեսար,
Դարձընում էր շա՛տ-շա՛տ... միայն խեղճ տնփեսա...(156)
Լրացնում է ուղիղ խնդրին

2. Հարբերական ածական

Գրկանոց հասակ, *վիրավոր* սրտիկ,
Աչքերում՝ արցունք, ճակատին՝ քրտինք... (8)
Լրացնում է անվանական անդեմ նախադասության գերադաս անդամին:

Ածականների ՝ որպես որոշիչ գործածության հարցերին անդրադառնալիս (իր տեղում կտեսնենք, որ այդ հատկությունը բնորոշ է այլ խոսքի մասերին ևս, մանավանդ՝ դերբայներին) հարկ ենք համարում նկատի ունենալ, որ ածականները (և՛ որակական, և՛ հարաբերական) կարող են որոշչային պաշտոն ստանալ ինչպես մենաբառ (մեկ բառ-բաղադրիչով արտահայտված), այնպես էլ կապակցված, մեկից ավելի բաղադրիչներից կազմված բառերով, ընդ որում՝ թե՛ որպես բառակապակցություն, թե՛ որպես մեկ բառային արժեք ունեցող կառույց (ուղղագրություն անցնելիս այդպիսի բառերը նշում ենք որպես գծիկով գրվող):

Դիտարկենք հետևյալ օրինակները.

Իսկ ձմերուկի կերված ճաղերը -
Լուսնի *հաստ-բարակ* փուլերի նման
Հող ու փոշով են ամպոտվում հիմա: (47)
Ընդգծվածը ձևի պարագայի կազմում որոշիչ է՝ կազմված երկու որակականներից (այստեղ ուշադրություն ենք հրավիրում նաև որոշյալի թվի վրա, ինչին հետո առանձին կանդրադառնանք):
Հաջորդ օրինակում արդեն նման բաղադրմամբ հանդես են գալիս հարաբերական ածականները.
Ծառեր ու խոտեր ծաղիկ են տալիս,
Որ *բնագրական-բուսական* սիրով
Իրար փոշոտեն: (26)
Կարելի է նաև բերել օրինակներ նման բարդությունների՝ և՛ գծիկով, և՛ առանց գծիկի կազմությունների գործածումից.

Ականջներն օտար միշտ հակված էին

Հայոց երգի մեջ
Լսել սոսափը *պարսկազենդական*,
Հայոց տաղերում
Որսալ մեղեդին *հույն-բյուզանդական*,
Հայոց խաղերում՝
Թուրք-թաթարական բայաթի-շարքի-ն: (61-62)

Վերջապես սևակյան հանճարով կարող են նման բարդություններ կազմել որակականն ու հարաբերականը միասին.

Կարծես հինավուրց այս Մայր Տաճարի
Երկինք խոյացած զանգակատունում
Կախել են մի *նո՛ր-անլեզվակ* մի զանգ՝
Մի համակ հուզանք... (16)

Հնարավոր է նաև ածական+դերբայ համադրություն՝ մեկ բառակազմական կաղապարով.

Իսկ մամռակալած վիմափոր գուռին
Մի հին *փչակված-բնաքանդ* ուռի
Ծեր մուրացկանի ձեռքերի նման
Իր կոշտուկապատ ճյուղերն է մեկնել ... (27)

կամ՝

Խենեշ ժպիտով կարել էր բարձեր
Իր *հաստ-իգացող* նստուկին հարմար... (87)

Սևակյան որոշիչները կարող են բառային արժեք ստանալ նաև համադասական շաղկապներով կապվելով.

Ու *չար թե բարի* այդ ճանապարհին
Ե՛վ ըս տասներկու բոլորակ տարի
Ճեմարանի մեջ եկավ ու անցավ, (36)
նաև՝
Եվ պատկերներից այս *ահագարհուր, բայց և իրական*
Նախ ցնորվեցին աչքե՛ր նրա...(213)

Ածականի որոշչային կիրառության հարցերը քննարկելիս հարկ է նաև կարևորել, որ ածականով արտահայտված լրացումը դեռ չի նշանակում անպայման որոշչի կիրառություն, և ածականը կարող է նաև նախադասության այլ անդամներ (հատկապես՝ ձևի պարագա) լինել

Եվ նա սկըսեց... <u>թուրքերեն</u> երգել: (15)
կամ՝

Թվաց՝ ամպերն են բացխուփիկ խաղում,
Թվաց՝ երկինքն է <u>կապույտ</u> ծիծաղում... (16)
կամ՝
Մինչ օրերն են *համբր* հոսում՝
Մտքի հետ է միտքը խոսում... (33)

Նաև անհրաժեշտ է ընդգծել համանուն բառերի գոյության հանգամանքը. երբ համանունների կիրառության դեպքում անմիջապես ընկալելի չի լինում, թե դրանցից ո՞րն է գործածված:

Ասվածը պարզաբանենք հետևյալ մեջբերմամբ.

Դռան շեմին

Թագավորի ու թագուհու ոտքերի տակ
Փշրվում է *բոլոր* ափսե մի սպիտակ...(114)

Այստեղ <u>բոլոր</u>-ը ածական է՝ կլոր, շրաջանաձև, բոլորշի իմաստով, և ոչ թե որոշյալ դերանուն: Հակառակ դեպքում՝ ափսե որոշյալը (ենթակա) պետք է դրված լիներ հոգնակի թվով (ինչպես նշել ենք՝ որոշչի ու որոշյալի համաձայնության հատկանշվող դեպքերին անդրադառնալու ենք):

Ածականով արտահայտված որոշիչ բաժնի համար մեզ նպատակահարմար է թվում հետևյալ գործնական առաջադրանքը.

Պոեմի համազանգերի ու դրդանջների անվանումներում գտնել ածականով արտահայտված որոշիչները:

բ) Թվականով,

ընդ որում՝ թվականի բոլոր տեսակներով

* բացարձակ թվական

Մարդի՞կ, որ մա՛րդ չեն,
Այլ ավելի շուտ մարդակերպ կապիկ.
Որ *յոթ* տարին մեկ չեն տեսնում նույնիսկ օճառի երես,
Տասը տարին մեկ չեն փոխում շապիկ... (174)

Եվ հիմա...
Հանկարծ շուրջ *300* սիրելի զավակ... (161)

- դասական թվական

Լսում էր չէ որ,
Թե ինչ նվագներ և ինչ անհամար,
Ինչ հայաշխարհիկ երգեր են հնչում
Եվ հիմա - հանկա՛րծ - հայոց նորընծա
Երկրո՛րդ Կոմիտաս... (37)

* նույն հատվածում՝ և՛ բացարձակ, և՛ դասական թվական

Լսում էր չէ որ,
Թե ինչ նվագներ և ինչ անհամար,
Ինչ հայաշխարհիկ երգեր են հնչում
Այդ *երկու* թխլիկ նորածինների
Դեռ ոչինչ չասող *առաջին* ճիչում... (4)

Որոշիչներից մեկը (երկու) լրացնում է հատկացուցչին, մյուսը (առաջին)՝ տեղի պարագային

Այստեղ կարելի է ուշադրություն հրավիրել քանակական թվականների հետ գործածվող որոշյալների թվին և բացատրել, թե ինչու մի դեպքում թվական որոշչի հետ դրվում է եզակի որոշյալ, իսկ մյուս դեպքում՝ հոգնակի: Ինչու՞ *երեք հարյուր <u>զավակ</u>*, բայց *այդ երկու թխլիկ <u>նորածինների</u>*: Այստեղ երկրորդ դեպքում որոշյալի հոգնակի թվով դրվելու պատճառը որոշչի ու որոշյալի միջև մեկ այլ որոշչի (թխլիկ) գործածությունն է: Կան նաև այլ դեպքեր, երբ քանակական թվականի հետ գործածվող որոշյալի թվի խնդիրներ են առաջանում, որոնց մի մասին սույն աշխատանքում կանդրադառնանք:

* բաշխական թվականով

Հարևան-դրկից՝ *մի-մի* շիշ օղով՝
Նրա տուն մտան՝ աչքալուսանքի... (4)

* կոտորակային թվականով

Եվ մեկ անգամ հաղթարշավով

Արդեն անցած *կես* Եվրոպան... (167)

* նույնիսկ դպրոցական ծրագրում չներառված մոտավորական թվականով

Տարվա այս ուշ եղանակին
Էլ գյուղացուն ի՞նչ է մնում,
Թե ոչ երգե՞լ, պարե՞լ, հարբե՞լ,
Ժամանակն է սուրբ պսակի,
Մեկ-տասնըմեկ հարսանիքի... (108)

նաև՝

Ցատկում է վեր,
Յոթ-ութ վայրկյան օդում մնում արձանացած... (122)

գ) Դերանուններով

Այս բաժինն ուսուցանելիս հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել հետևյալ հանգամանքների վրա.

- անձնական ու փոխադարձ դերանունները որոշիչ չեն դառնում;
- դրանք նաև որոշիչ լրացում չեն ընդունում:

Դպրոցական ծրագրից դուրս է, սակայն այստեղ մենք մեր նկատառումներն ենք հայտնում, որ որոշակի դեպքերում անձնական դերանուններն այդուհանդերձ որոշիչ լրացումներ ընդունում են: Որպեսզի մեր պնդումը մերկապարանոց չհնչի, սույն աշխատության առանձին բաժնում անպայման այդ խնդիրը կշոշափենք:

Որպես որոշիչ հանդես եկող դերանունների կիրառական նշանակության հարցերը քննարկելուց առաջ անհրաժեշտ է սովորողներին հիշեցնել, թե որոնք էին առարկայանիշ, որոնք էին առարկայի հատկություն նշող, և որոնք էին գործողության-եղելության հատկություն նշող դերանունները: Ընդ որում պետք է հիշել նաև, որ նույն դերանունը որոշակի դիրքում կարող է ցույց տալ առարկա (առարկայանիշ), մեկ այլ դեպքում ցույց տա առարկայի հատկանիշ (օրինակ՝ այս, այդ, այն), հնարավոր է նաև մեկ առարկայի հատկություն նշելը, մեկ՝ գործողության (այսքան, ինչքան և այլն): Դա կարևոր է նաև այդ դերանունների՝ շարահյուսական պաշտոնների տարբերակման տեսանկյունից: Բացի դա՝ պետք է այստեղ ևս անդրադառնալ համանունների խնդրին, քանի որ որոշ դերանուններ ունեն իրենց այլխոսքիմասային համանունները. <u>բոլոր</u> բառի մասին արդեն խոսել ենք, նաև՝ <u>ոոջ</u> դերանունը, և <u>ոոջ</u> ածականը՝ կենդանի, ապրող իմաստով, կա <u>որ</u> դերանուն, նաև՝ <u>որ</u> շաղկապ, կա <u>այլ</u> դերանուն, նաև՝ շաղկապ և այլն:

* ցուցական դերանուն

Ու շեկլիկ-մեկլիկ, աչքերով ծավի
Այդ հարսը հանկարծ... դառնում է տավիղ... (31)

Եվ խորհել, որ *այդ նույն* պահին,
Երբ թուրք սուլթանը այսպես վեհաշուք
Տոնում էր ծնունդն ու չմեռնելը հոբելյար Մահի,
Միևնույն պահին
Այդ նույն աշխարհում
Գարուն էր, գարո՛ւն: (76)

* որոշյալ դերանուն

Մի *ոոջ* ժողովուրդ սուրբ ձեռքը նրա
Իր բերնին տաներ,
Փեշերը պաչեր... (7)

Մի *ո՛ոջ* ժողովուրդ մեկ-մեկ թրատել,
Մի *ամբո՛ոջ* անտառ արմատից հատել... (173)

* անորոշ դերանուն

Ա՜ստ՝ հայոց հոտի այս սուրբ փարախում,
Հովվապետն ինքը ականջ է կախում
Ինչ-որ մի մանկան անօրեն երգի... (16)

Ա՛խ, ինչո՞ւ անվերջ չհանեց հոգիդ,
Որ *ուրիշ* հագուստ նա տեսներ հագիդ... (150)

Հարկ ենք համարում խոսել *որոշ* դերանվան մասին, քանի որ այդ բառը հայերենի՝ ինքն իրեն հակասող, տրամագծորեն հակառակ իմաստներ ունեցող բառերից է (հմմտ.՝ ձգել, պարապ(ել) բառերի իմաստները), և հարկ է, որ դեռևս դերանուն թեմայի ժամանակ սովորողը դա գիտակցի: Այսինքն՝ <u>որոշ-ը</u> որպես դերանուն՝ անորոշ դերանուն է՝ <u>ինչ-որ,</u> <u>որևէ</u> իմաստներով, իսկ որպես ածական՝ արտահայտում է <u>որոշակի</u>, <u>հստակեցված</u>, <u>բացահայտ</u> իմաստները: Պնդումը հիմնավորենք հետևյալ մեջբերմամբ.

Հայ ելևէջի հոսքը վարարուն
Մի կախարդ ձեռքով մտել էր խոր հուն,
Գտել էր անշեջ ու *որոշ* հասցե... (132)

*ժխտական դերանուն

Մի գիշերում պոկոտվեցին ու զատվեցին,-
Շեկ աքսորի սև փակուղուց չազատվեցին
Ո՜չ մի հանճար,
Ո՜չ մի տաղանդ,
Ո՜չ մի քանքար՝
Ով որ Պոլսում եղեռնական այդ գարնան կար...(192)

*հարցական-հարաբերական դերանուններ

Եվ ո՞ւր է ինքը.
Այստե՜ղ՝ Բեռլինո՛ւմ,-
Սրամիտ բախտի *ինչպիսի՛* հանաք,
Ճակատագրի *ի՜նչ* ծաղրուծանակ... (71-72)

կամ

Ո՞ր գյուղացու,
Ո՞ր միամիտ-աստվածավախ շինականի մտքով կանցներ... (103)
կամ
Մեզ լավ է ծանոթ ծաղրուծանակը այս հոգեխարտիչ,
Դա ծանոթ է մեզ *քանի՛* դար արդեն: (212)

Հարաբերական դերանունների խնդիրը հեշտությամբ կլուծվի, եթե սովորողները գիտենան, թե որն է հարցական ու հարաբերական դերանունների տարբերակման հիմքը: Այստեղ միայն պետք է հատուկ ուշադրություն հրավիրել որ(ը) դերանվանը, ինչի միջոցով(հոլովաձևերի) առավելապես կապվում են որոշիչ երկրորդական նախադասությունները:

Նաև հարկ ենք համարում նշել, որ հարցական դերանուններից մի քանիսը կարող են հանդես գալ կրկնավորված կառույցով՝ ինչ-ինչ, քանի-քանի, ինչքան-ինչքան և այլն: Պնդումը հիմնավորել հետևյալ օրինակով.

Իսկ թղթից դուրս՝
Որքա՜ն-որքա՜ն
Շինականի ձեռքով ցանված,

Բայց չինձված-անտեր բերքեր... (53)

դ) Անդեմ բայերով

Այս բաժնին անդրադառնալիս պետք է վերհիշել՝ որոնք են անկախ դերբայները, և արձանագրել, որ դրանցից համակատարը ոչ մի կերպ որոշիչ չի դառնում:

* անորոշ դերբայի սեռական հոլովաձև

Հետո, հանկարծ, թափ է տալիս կեղտ ու փոշին
Կիրակնօրյա հագուստներին տղամարդկանց
Կամ ձեռքերն է շուտ *մաքրելու* սուտ փորձ անում... (101)

Հայկական հարցից Թուրքիան ազատվեց
Հայաստան երկրում հայ *չթողնելու* մի ահեղ ելքով... (173)

* հարակատար դերբայ
Եվ ընկնելով
Հանկարծակի *բարիացած* քամու վիզը՝
Քայլ է անում նաև *խեղդված-կոնդված* ձյունը: (113)

Սերն է մխում կուրացուցիչ-դառը ծխով,
Ինչպես ծառից հենց նոր *ջարդված - խարույկ դառած*
Թաց ոստերը՝ անթթվածին քարանձավում... (129)

Բերված օրինակներում նաև տեսանելի է ոչ միայն հարակատարի՝ որպես որոշիչ կիրառությունը, այլ նաև նույն հարակատարի դերբայական դարձվածներով նոր բարդությունների (գծիկով գրվող) ստեղծումը:

* ենթակայական դերբայ

Այս դերբայը ևս կարող է որոշիչ դառնալ ինչպես միաբառ, այնպես էլ դերբայական դարձվածի գերադաս անդամ լինելով.

Նա ուներ մատնե՛ր.
Տաքուկ ու նրբին, *աղերսո՛ղ* մատներ... (147)

կամ՝

Փղձկացող Վեհը հազիվ բարբառեց... (16)

նաև՝ բառաբարդված տարբերակով՝

Ուխտ պահանջող - երդում կնքող Ավետարան,
Որ մագաղաթ իր շուրթերն է իրար տալիս...(112)

Հարակատար ու ենթակայական դերբայներով թե՛ մենաբառ, թե՛ դերբայական դարձվածով) որոշիչները հսկայական քանակով են ներկայացված պոեմում, և եթե ուսուցիչը կցանկանա համապատասխան առաջադրանք տալ՝ թեկուզ մեկ ողողանջից դուրս գրելու պահանջով, սովորողները առատ «հունձք կանեն»:

Մեր համոզմամբ՝ կա մի խնդիր, որն ընդհանուր լեզվական է, և անտարակույս բայերին է վերաբերում, սակայն հնարավոր է, որ այլ տեսակետներ ևս լինեն: Խոսքը –իք վերջավորությամբ (անորոշի ձևին ավելացող) բառերին է վերաբերում, որոնց մի մասը արդեն իսկ դարձել են գոյական և ձեռք են բերել բառային ինքնուրույնություն, ինչպես՝ խաղալիք, ըմպելիք, վառելիք, ակնկալիք և այլն, բայց մի զգալի մասը (տանելիք, կառուցվելիք, ստանալիք և այլն) դեռևս իր հստակ տեղը չունի մեր խոսքի մասային ցուցակներում: Ավելին՝ դրանք որպես բառ չեն հաշվարկվում, և բացակայում են նաև բառարաններից: Դա հասկանալի կլիներ, եթե դրանք դիտարկվեին որպես դերբայներ նաև ներկայումս. երկար ժամանակ կատարելի (ապառնի) դերբայ 2 կոչվող[8] այդ բառաձևերը ունեցել են քերականական լիազորություններ, սակայն չգիտենք՝ երբ և ում կողմից, դրանք դուրս են մղվել լեզվից:

[8] .Տես Հայրենագիտական բառարան, էջ 299-300:

Մեր մտահոգությունը հայտնելով այդ առումով, բոլորովին չհամաձայնելով այն տեսակետի հետ, որ այդ բառերը (թեկուզ բառաձևերը) սակավ կիրառություն ունեն, և այդ կառույցի բառերը հետզհետե փոխարկվում են գոյականների (նաև՝ ածականների), իսկ դեռևս գոյական չդարձածները կարելի է հեշտությամբ արտահայտել այլ ձևերով (հմմտ.՝ ուղարկվելիք ծանրոց և ուղարկվող կամ ուղարկվելու ենթակա ծանրոց), պատկերացնելով այն ուսուցչի վիճակը, ում մի անհանգիստ աշակերտ նման հարցերով կտանջի, բոլոր դեպքերում նշում ենք, որ Սևակն ակնհայտորեն այդ ձևերի՝ որպես բառ (գոնե՝ որպես գոյության իրավունք ունեցող բառաձև) դիտելու տեսանկյունից է մտածել, ուստիև օգտվել է այդպիսի բառերի (բառաձևերի) ընձեռնված հնարավորությունից, կիրառել է տարբեր քերականական պաշտոններով, որոնցից որոշչայիններից մի քանիսը կարող ենք ներկայացնել.

Իսկ նա շատ հաճախ ինքն էլ էր զգում,
Որ իր հաղթ բազկում
Տալիք հարվածի թափը պակաս է... (62)

Միայն թե երբե՞ք էլ այնպես չանի,
Որ *աշխարհ գալիք* նոր մի Կոմիտաս
Իր անմեղ սերը սրտում զնդանի... (149)

Եվ նույնիսկ նրա օդը *շնչելիք*
Ապականեցին շուրջբոլոր այնպես...(145)

Թեկուզ մարած, բայց *վառվելիք*
Մեր հոգու ջահ հազարմոմյա... (225)

Դերբայական որոշիչների թեմային անդրադարձել ենք սույն աշխատության մեկ այլ բաժնում ևս, երբ խոսում ենք որոշիչը ձևի պարագայից տարբերակելու մասին:

ե) Մակբայով

Հասկանալի պատճառով՝ մակբայները քիչ են որոշիչ դառնում, քանի որ նրանց արտահայտած հատկանիշը նախևառաջ վերաբերում է գործողությանը (եղելությանը): Բայց որոշ դեպքերում դա հնարավոր է.

Տարիներն են նորից հոսում,
Իսկ նրա դեմ՝ *միշտ* Մանրուսում,
Իսկ նրա դեմ՝ *անվերջ* Խազգիրք... (23)

զ) Գոյականով

Այս բաժինը և ամենատարողունակն է, և դժվար ընկալելին, մանավանդ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ հոլովական խնդիրները (ուղղական-հայցական, սեռական-տրական) դեռ մինչև վերջ հստակեցված չեն հայագիտության և հայերենի լեզվաբանության կողմից:

Մենք չենք կարող հինգհոլովյան սկզբունքն ընդունող լեզվաբանների մոտեցումներով առաջնորդվել, քանի որ դպրոցական ծրագիրը պահանջում է գոյականի (նաև դերանվան, անորոշ դերբայի ու գոյականաբար առնված ցանկացած բառի) համար յոթ հոլովի առկայությունը:

Դասագրքում[9] նշված է, որ գոյական որոշիչները կարող են դրվել ուղղական, սեռական, բացառական ու գործիական հոլովներով: Այդպիսի դիրքորոշում ունի նաև «Հայրենագիտական բառարան»-ը[10] :

«Շարահյուսության»[11] հեղինակները հնարավոր են համարում նաև ներգոյական հոլովի՝ որոշչային կիրառությունը:

> Մեր կարծիքով՝ գոյականի՝ որոշչային կիրառության խնդիրը կարոտ է առավել հստակեցման, կամ էլ՝ դպրոցական ծրագրի շրջանակներում պետք է բավարարվել «առայժմ սա է» մոտեցմամբ, իսկ բանավեճերը և հստակեցումները թողնել բուհական ու ակադեմիական կրթությանը: Բոլոր դեպքերում՝ յուրաքանչյուր դպրոցում կարող են լինել սեփական տեսակետը զարգացնել ցանկացող աշակերտներ, որոնց հարցերի առաջ չստեղծագործող և կաղապարների մեջ առնված ուսուցիչը կարող է զոհի կարգավիճակում հայտնվել:

Մեր համոզմամբ՝ այն, ինչը և՛ դպրոցական, և՛ բուհական դասագրքերում ներկայացվում է՝ որպես գոյական (թե՛ ուղղական, թե՛ այլ հոլովներով) որոշիչ, հայոց լեզվի քերականական առանձնահատկություններից չի բխում: Մենք համարում ենք, որ այդպիսի որոշիչները, որոնք ներկայացվում են որպես գոյականի հոլովաձևերով որոշիչներ, պետք է կամ անվանափոխվեն, կամ *Գոյականի հոլով* դասընթացում համապատասխան փոփոխություններ կատարվեն:

Մեր՝ այդպես կարծելու պատճառներն են.

- որոշչին հատուկ *ո՞ր* կամ *ինչպիսի՞* հարցերը, ինչը ոչ մի կերպ չի համատեղվում ո՛չ ուղղական հոլովին հատուկ *ո՞վ, ովքե՞ր, ի՞նչ(ը), ինչե՞ր(ը)* հարցերի, ո՛չ այլ հոլովներին տրվող *ինչի՞ց, ինչո՞վ* և դասագրքայնացված նման այլ հարցերի հետ;

- դասագրքերում և ձևաբանության մասին գիտական աշխատություններում հոլովներին տրվող սահմանումները, որոնցում բնականաբար բացակայում են տվյալ հոլովաձևի կիրառելիության շատ հատկանիշներ, մասնավորապես՝ որոշչային կիրառման:

> Միանգամից նշենք, որ հեղինակի տեսանկյունից հոլովը (և հոլովական համակարգը) պետք է դիտվի միայն ձևակազմական և ոչ մի կերպ՝ կիրառական-շարահյուսական տեսանկյունից: Անիմաստ ենք համարում հոլովը կիրառականությամբ սահմանելը:

Եթե այլ հոլովները՝ սեռական-տրական, բացառական, գործիական, նաև՝ ներգոյական, կազմավորման պլանից տարբերակելի են, ապա չթեքված գոյական որոշչին ուղղական հոլովի «տարազ հագցնելը» բխում է միայն բառի ուղիղ ձևից (աշակերտի համար մնում է անբացատրելի՝ ինչու՞, օրինակ, սա չի կոչվում հայցական հոլովով որոշիչ, այլ հենց ուղղական. չէ՞ որ հայցականը մի շարք դեպքերում նույնանում է ուղղականի հետ): Հասկանալի է, որ այդ դեպքում հակառակը պնդողները (այդ արտահայտությունները *ուղղական* կոչելու կողմնակիցները), պետք է ելնեն հոլովների՝ մշակված ու հրամցվող մեկնաբանություններից. այն է՝ հայցական հոլովը ցույց է տալիս կրող առարկա և այլն: Բայց նման կերպ հարցին մոտենալիս պետք է ընդունենք, որ հայցական հոլովով դրվում է բացառապես միայն ուղիղ խնդիրը, և հայցական հոլովի այլ կիրառությունները (բացի բացահայտչից) վերացնենք, իսկ ուղղական հոլովն էլ թողնենք միայն ենթակայի համար: Բացի դա՝ հոլովական խնդիրը նոր երանգ է ստանում, քանի որ կարևորվում է բառի(բառաձևի) ոչ թե շարահյուսական, այլ ընդամենը ձևակազմական

---

[9] Տես՝ Հայոց լեզու 8-րդ դասարան, էջ 94:

[10] Տես՝ Հայրենագիտական բառարան, էջ 509:

[11] Արտաշես Պապոյան, Խաչիկ Բաղիկյան, «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն» , Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2003 թ., էջ 120:

դերը: Իսկ ձևակազմման տեսանկյունից հայերենի գոյականներն ընդամենը հինգ ձև ունեն. մեկը՝ ուղիղ, չորսը՝ թեք:

Ինչևիցե, չհամաձայնելով հանդերձ հոլովների՝ հանրակրթական ծրագրերում ու դասագրքերում ցուցաբերված մոտեցումներին, նկատի ունենալով գոյական որոշիչների տարածվածությունը՝ շարունակում ենք՝ ինչպես ծրագրում ու դասագրքերում:

* ուղղական հոլով

Սևակյան գլուխգործոցում ուղղականաձև գոյական որոշիչներն առատ են:

Լեռնաշխարհում աղբյուր-վտակ
Իրենց *սնդիկ* մարմնի վրա նորից հագնում են ապակի... (92)

Այստեղ էր արդեն *ցար* Նիկոլա՛յը... (79)

Հայ ելևէջի վայրի տարերքը,
Հեղեղ մեղեդին,
Տարափ պարերգը
Էլ չէին արդեն հնչում ու կորչում... (131)

Երգել են նրանք մեր *ցորեն* հացից... (11)

Բառի ուղիղ ձևով դրված որոշիչների հարցը քննարկելիս ևս մեկ անգամ անհրաժեշտ է անդրադառնալ բառերի փոխանվանական կիրառությանը՝ նշելով, որ այդ դեպքում գոյականները ձեռք են բերում ածականական իմաստ և գործածվում են ածականաբար, ուստիև ձեռք են բերում ածականներին բնորոշ (նաև անկախ դերբայներով արտահայտելի) հատկություններ, այդ թվում՝ ստանում են դրանց տրվող հարցերը:

* սեռական հոլով

Սեռական հոլովով գործածվող որոշիչների ու հատկացուցիչների իմաստահյին-շարահյուսական առանձնահատկությունները վաղուց վերլուծված են մեր լեզվաբանության մեջ: Այդ հանգամանքը քիչ խնդրահարույց է: Մանուկ Աբեղյանը, իր մասնավորում է որակական սեռականի ընդհանուր բնութագրումը՝ համապատասխան օրինակներով ցույց տալով, «որ առարկայի հատկություն ասվածը կարող է նշանակել՝ 1. ինչի ընդունակ է, կարող է անել մի առարկա (գործի մարդ, կռվի մարդ, որսի շուն), 2. ինչի համար, որ սահմանված, հատկացված կամ պիտանի, արժանի է մի առարկա (ընթերցանության գիրք, ծախսի փող, կաթի աման, թեյի գդալ), 3. ինչ-որ մի բանով լինում է, կատարվում է (տանջանքի գործիք, փրկության միջոց), 4. ինչ-որ մի բան լինում է (ձեռքի աշխատանք, քամու ջաղաց), 5. վիճակ, աստիճան, տարիք և այլն, որ ունի, կամ որի մեջ գտնվում է մի բան (միջին կարգի դպրոց, նոր ձևի հագուստ, մի հասակի երեխաներ և այլն)»[12]: Եվ այդ տեսակետը հետագա ուսումնասիրողների կողմից լուրջ առարկության չի արժանացել, քանի որ կարևորվում է գործածվող գոյականի առարկայական իմաստի չեզոքացումը, և դրան զուգահեռ՝ հատկանշային իմաստի գերակայումը:

Մեր համոզմամբ՝ Պ. Սևակի բանաստեղծական լեզվի յուրահատկությունների տեսակետից սեռական հոլովի իմաստային առումներից թերևս ուշագրավը առարկայի որակական հատկությունը ցույց տվողներն են: Որակական սեռականով կապակցությունները արտահայտչական հարուստ հնարավորություններով են օժտված՝ մասնավորապես հանդես գալով որպես մակդիր: «Անլռելի զանգակատուն» պոեմում, սկսած համազանգերի ու դողանջների անվանումներից (որոցում շատ են սեռական հոլովաձևով լրացումները), սեռական հոլովով դրված գոյականները հաճախ որոշիչ-հատկացուցչային վեճ կարող են առաջ բերել, և հետազոտողը կարող է երկընտրանքի

[12] . Մանուկ Աբեղյան, «Հայոց լեզվի տեսություն»,Երևան, 1965թ., էջ 426:

առաջ կանգնել. տվյալ բառաձևի շարահյուսական պաշտոնը ի՞նչ է՝ որոշի՞չ, թե՞ հատկացուցիչ:

Եթե ողողանջ ավետիսի կապակցության մեջ սեռական հոլովի հատկացուցչային որոշակի իմաստ առկա է, ապա ողողանջ հայտնության կամ առավել ևս ողողանջ հրաշագործման կապակցություններում առավել ընդգծուն է սեռական հոլովով դրված բառերի հատկանշային նշանակությունը: Դա կարելի է պարզել նաև պարզապես հարցեր տալով՝ *ինչի՞* ողողանջ, թե՞ *ինչպիսի՞* ողողանջ:

Բոլոր դեպքերում՝ մենք օրինակներ կբերենք պոեմից:

Սրա *վզի* «նապոլեոն»-ի,
Նրա *մեջքի* արծաթ գոտու
Շողքն է ընկնում վանքի պատին (100)

Այստեղ՝ ծնունդ,
Այնտեղ՝ կնունք,
Աչքալույսի ժպտուն օրի: (92)

Իսկ բքաշունչ *ձմռան* քամին
Զարանում է իր մտքի մեջ ու կատաղում... (113)

Ու նորից ցրեն
Ու փռեն
Զորս կողմ
Մարդեղացումը *աստվածայնության*... (232)

* Բացառական հոլով և գործիական հոլով

Հարկ է նշել, որ Սևակը բացառական հոլովով որոշիչներին մեծ տեղ չի հատկացնում: Բայց բոլոր դեպքերում՝ պոեմում կան նման գործածություններ.

Զքվել էին՝ թողնելով
Լոկ պաղ մոխիր կամ մատյան
Բևեռագիր ու *քարից*: (134)

Կամ՝

Կրակ կտրած երիտասարդ մի թխադեմ՝
Թագավորի սրտամոտիկ *մակարոններից*,
Լող է տալիս գետնի վրա՝ զույգ ոտներով... (110)

Առավել հարուստ ու բազմազան են գործիական հոլովով որոշիչների կիրառությունները.

Սակայն դու,
Որ քո *պատմագրքերով*
Մի ձիգ ցուցակ ես
Ու լեցուն ցանկ ես
Նահատակների՛... (84)

Թե հոգևոր
Ու կարգավոր
Մի վարդապետ *բեղ-մորուքով*
Վանք է եկել՝ վանք չի մտել...(103)

Քարացել են ակնածանքից
Սև երիզով դրոշներ... (235)

* Ներգոյական հոլով

Խնդրահարույց է, բայց մենք կիսում ենք որոշակի տեսանկյունից ներգոյական կառույցները՝ որպես որոշիչ դիտելու գիտական լինելու տեսակետը:

Զարաճճի քամու առաջ
Տերևների սրսրփումը՝
Աշնան վառած անհուր բոցում.
Նոր մայրացած ստինքների

Մեկմեկի հետ լուռ շփումը՝
Այգու նման բուրող ծոցում... (52)
կամ

Ու կմնա միշտ լույս զվարթ,
Լույս՝ *աչքերում* հայ մանուկի,
Լույս՝ մտքի մեջ հայ պարմանու,
Հայ հարսների պտղած *ծոցում*... (239)

Մենք պոեմում հայտնաբերել ենք նաև դեպք, որտեղ որոշիչը, մեր խորին համոզմամբ, արտահայտված է տրական հոլովով: Դա հանձնում ենք ընթերցողի ու քննադատների հայեցողությանը՝ մնալով մեր պնդման իրավացիության մեջ.

Բարենորոգո՛ւմ...
Գլուխը քա՜ղը.
Թո՜ղ լիներ թեկուզ բարենորոգում,
Բայց *ոչ թե թղթին*, ոչ թե թանաքով: (74)

է) Կապական կառույցներով

Հասկանալի է, որ նման դեպքերում առավելապես կիրառելի են նման, պես կապերը.

Իսկ զոլավոր և կամ պուտ-պուտ գուլպաներին՝
Խառում սապոգ, մազե քոշեր,
Սև կարիճի պոչի նման կեռքիթ տղրեխ: (95)

Ճխլտում էին նույն այդ ոտներով
Մեր մանուկներին դեռ նորատոտիկ,
Մեր մանչուկներին՝ *լույսի պես արդար*,
Առավոտի պես մաքուր ու գերող,
Գարնան պես բուրող... (174)

Ո՞վ էր քո սերը,
Բախտի պես թաքուն
Քո սիրո տերը... (150)

ը) Ոչ կապական և ոչ դերբայական կապակցություններով.

Հավետ անմոռաց մե՜ր Գոլիցինը,
Երկու գլխանի արծիվը կրծքին
Այդ մոլի ցինը,
Փակում է հայոց դպրոցներն ամեն. (80)

Ուշադրություն ենք հրավիրում հետևյալ հատվածի վրա, որում մակդիր-որոշիչների զգլխիչ առատությունը մի աննկարագրելի տպավորություն է թողնում՝ ստիպելով ընթերցողին և՛ լիանալ-վայելել, և՛ մտորել ու գլուխ խոնարհել խոսքի այսպիսի վարպետության առաջ.

Եվ արևի համ ունեցող,
Զորեքդիմաց ծամ ունեցող,
Մեջքակոտոր, ծնկածալիկ,
Ծոցվոր,
Բոցվոր,
Խնկածաղիկ,
Խունջիկ-մունջիկ
Հարս ու աղջիկ՝
Սիրո հրշեջ - սիրո հրձիգ՝
Տասի համար անգութ դահիճ,
Մեկի համար խոնարհ ծառա,-

Ճակատներին բոլոր «շահի»
Ու մեջքներին ոսկե քամար,
Արեգակից շատ ավելի
Կարմրատակած իրենց շողքից,-
Ծաղ են գալիս ծլընգոցով... (97-98)

Ինչպես երևում է տեքստից, այստեղ կուտակված են ամենատարբեր արտահայտությամբ որոշիչներ, որոց զգալի մասը՝ բառակապակցություններով է ձևավորված:

թ) **Որոշիչ երկրորդական նախադասություններն** զգալի չափով առկա են պոեմում, բայց քանի որ դա դուրս է կոնկրետ որոշիչ թեմայի դասավանդումից, դրանց սույն աշխատության մեջ չենք անդրադառնում: Ընդամենը մեկ նյուանս ենք ուզում նշել. Սևակյան խոսքաստեղծման կախարդանքն այքան զորեղ է, որ ընթերցողը միանգամից չի կարողանում ընկալել, թե ինչպես է բառերից կամ բառակապակցություններով կազմված որոշիչներից անցում կատարվում նախադասություններով արտահայտվող որոշիչների, այնքան որ այդ սահմանը նուրբ է ու թափանցիկ: Ահա այդպիսի մեկ օրինակ.

Իսկ ի՞նչ ունեին: Լոկ ձայն կլկըլան.-
Մերթ այնպես մեղմիկ,
Ասես թե գինով լցնում են կուլան.
Մերթ այնպես զնգուն,
Ասես թե կիրճում հովն է շնկշնկում.
Մերթ այնպես խաղաղ,
Կաքավն է ասես սաղմոսում «կդա».
Մերթ այնպես հորդուն,
Ասես ընկել ես ջաղացի ջրտուն... (9)

ժ) Սևակյան աշխարհընկալման և որ հատկանշական է՝ խոսքակերտման տեսանկյունից նախադասության ցանկացած անդամ կարող է դառնալ ցանկացած բառ կամ բառակապակցություն:

Բերենք ընդամենը մեկ օրինակ, որտեղ որոշչի պաշտոն է ստանձնում ... դիմավոր բայը: Ճիշտ է, որպես երգի տող է վերցված, իսկ կոմիտասյան երգերը պոեմում մեջբերված են մի անասելի ու ճոխ առատությամբ, բայց բոլոր դեպքերում՝ դա ոչ միայն անսպասելի է, այլև անչափ տպավորիչ.

Դեմքը՝ գունատ, բայց խորոտիկ,
Իսկ հայացքը՝ *քելե՛ր-ցոլե՛ր*... (14)

Եվս մի խնդիր. ներկայումս ի՞նչ խոսքի մաս են՝ գոյակա՞ն, թե՞ ածական, գրաբարյան հոգնակիակերտ ք-ով բառերի սեռականի քարացած ձևերը՝ մեծաց, վրաց, ապրողաց, ալանաց և այլն: Դրանց՝ ածական նկատառելու դեպքում, դրանք բառ են դառնում, և պետք է տեղ ունենան բառարաններում, գոյական դիտարկելու դեպքում՝ դրանք արդեն բառաձև են, և գոյականի հոլովառության հարցերը քննարկելիս պետք է համապատասխան նշումներ կատարել: Մասնավորապես՝ բառարաններից և ոչ մեկում չկա <u>հայոց</u> բառը (բառաձև՞ը), իսկ այդ բառը պոեմում բազմակի կիրառություն ունի:

ՈՐՈՇՉԻ ՈՒ ՈՐՈՇՅԱԼԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՍԵՎԱԿՅԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որոշչի սևակյան ընկալումը շատ տարողունակ է՝ վեր սովորական մահանացուների համար գծված սահմաններից: Բառերը բանաստեղծի երևակայության ուժով և խոսքակերտման ոսկերչական նրբությամբ նրա հանճարեղ գրչի տակ ստանում են ամենաանսպասելի ու անկրկնելի գույներ ու երանգներ, բուրում են գրեթե անհնարին թարմությամբ ու շքեղությամբ: Արդեն խոսել ենք սևակյան բառակերտման մի քանի դրվագների մասին: Հիմա պարզապես ի հավելումն դրանց՝ ներկայացնում ենք վարպետության դասերի մեր ծաղկաքաղը:

Երբ «Անլռելի զանգակատան» հեղինակը գրում է՝

Դեռ վնաս չունի,
Թե աստվածն *անգո չեղյալ* Մովսեսին
Գերադասել էր ու նախընտրել
Միջնորդ իր միջև ու ժողովրդի... (148-149)

Կամ
Այլ միանգամից երկու մայրցամաք՝
Մի երկկողմանի *յանոսյան* դիմակ -
Կիսով ասիական ու եվրոպական ... (162)

ապա հասկանում ես, որ բանաստեղծը քաջատեղյակ է ոչ միայն Աստվածաշնչից, այլև հին հունահռոմեական դիցաբանությունից:

Եթե հեղինակը գրում է՝

Եվ անառ Պոլիսն իսկապես առավ,
Բայց ոչ թե իբրև *գյոռբագյոռ* Ֆաթիհն... (160)

ապա ընկալելի է օտարաբառ(թուրքերեն) որոշիչը կոլորիտ ստեղծելու նպատակով կիրառելը:

Բայց երբ հեղինակը երկնում է այսպիսի տողեր՝

Ինչպես մարդկանց մեջ՝ անցողիկ կյանքում,
Այդպես պատմության *ծանրը* երկայնքում
Երևի նաև լինում են ցեղեր ... (83)

ապա անակնկալից կարկամում ես. պատմության երկա՞յնք, այն էլ՝ ծա՞նր:

Դե, իսկ ահա այսպիսի մակդրավորումը կարծես թե զարմանք չպետք է հարուցի՝ հեղինակի ձիրքը նկատի ունենալով.

Իր իսկ *սեփական նախաձեռնությամբ լույս աշխարհ եկած*
Մի ինքնագլուխ արևածաղիկ աչիկն էր թարթում
Երկա բոստանից...(76)

Հասկանալի է. իր սեփական նախաձեռնությամբ լույս աշխարհ եկողը պետք է որ ինքնագլուխ լինի, բայց դրանց կողքին հայտնվում և առոք-փառոք բազմում է՝ <u>հերու</u> (անցյալ տարի) բարբառային բառի թեք ձևը...Ինչու՞ մեկնաբանել, երբ անհրաժեշտ է միայն հիանալ:

Որ անցնում էր երգ ու պարով,
Կռիվներով *գինեհարույց*,
Ու հաշտությամբ *գինեմիջնորդ*... (125)

Իսկ այս տողերում ընդգծված բառերը սոսկական մակդիրներ չեն. դրանք մի ամբողջ պատմություն են՝ կյանքի փորձով ստուգված, կյանքը ոչ միայն կատարելապես հասկանալու միտումով, այլև այդ կյանքը սիրելու չափ հարատև:

Ընթերցել «Զանգակատունը» և անվերջ չապշել հնարավոր չէ: Եվ պոեմի բազմաթիվ արժանիքների մեջ որոշչային լուսեղեն գամման մի առանձնահատուկ տեղ է գրավում: Փորձենք չապշել ու չկարկամել անառարկելիորեն մակդրացող որոշիչների գունեղ-հյութալի, սովորական երևակայությամբ չեզերվող, կենսգիշերին ճառագող արեգակի ու ձմռանը ճայթող ամպրոպի նման անսպասելի գործածություններից .

Արձանացած-անշարժ «Փոխ»-եր,-
Ինչպե՞ս շարժել, տեղից փոխել.
Դիակնացած «Քարոզ» ու «Ճառ»,-
Ի՞նչպես գտնել հարության ճար... (23)

Ե՜վ ակոսն ու խորունկ առն ես,
Ե՜վ *մատնընտիր* սերմը նրա... (240)

Հայ հարսների պտղած ծոցում,
Հայ *թոռնօրոր* նանիների
Ինքնամոռաց ժպիտի մեջ... (239)

Սակայն կարծես մի մարդ էր *բազմահատորյա*... (162)

Ուր չէր վառվել Լուսավորչի
Առասպելյա ոչ մի կանթեղ,
Վերին կամքով ոչ արարչի,
Այլ հայորդու... (225)

Եվ մաշկը մեկեն թավիշ է դառնում՝
Անցյալ երինջի կոնակի նման... (208)

Ահա որոշիչների բացառիկ մի հեղեղ՝ մեկը մյուսից անսպասելի ու անմիջապես չընկալվող, մեկը մյուսից՝ հրաշալի ու կատարյալ(ուշադրություն՝ գործիական հոլովով դրված որոշիչներին).

Դու՝ հետերա-տիկին-խանում,
Դու՝ պչրուհի մի *կախարդիչ*,
Արմավալանջ, նոճեթարթիչ,
Մարմարայի պարեգոտով,
Բոսֆորական կապույտ գոտով,
Մահիկահոնք, արևաչյա,-
Մի *զգլխիչ սիրավաճառ*՝
Դեմքով բարի, իսկ սիրտը չար... (155)

Դե իսկ այսպիսի բառակերոտու՞մ... ո՛չ, պատկերաքանդակումը պարզապես կարող է կաթվածահար անել մարդկային պատկերացումների բոլոր թոթով մակարդակները.

Եվ քանի՛- քանի՛ հայ երաժիշտներ՝
Քոյասիրահար ու քեզապաշտներ՝
Ելած քո ազգի բեղուն ընդերքից,
Բեմերի վրա համայն աշխարհի
Մեր տաղ ու պարի
Թովչանքն են ցրում... (228)

Սևակի լեզվամտածողությունը թույլ է տալիս ոչ միայն առատորեն ակոսել որոշչային բեղուն հերկը, այլև ազատորեն վարվել՝ որոշյալներ ընտրելիս: Ինչ ասես, կարող է դառնալ որոշյալ: Խնդրեմ՝

Ու երբ ձմռան *անծայրածիր* <u>սպիտակին</u>
Մարդիկ իրենց *մժեղային* <u>սևն</u> են խառնում՝
Տաք տներից ելնում են դուրս ու, խևի պես,
Ո՞ւր են գնում - ո՞ւր են դառնում՝ չես ըմբռնում... (106)

Զառ վառը նրա ո՞նց էր վայելում
Վարդապետական ճնշող <u>սևերիդ</u>...(151)

Որ բարեխընամ մի Վեհաժողով
Որոշում հանեց... *հայ* <u>հողագուրկին</u>
Զբավարարել վեց արշին հողով... (74)

Որոշյալ կարող է դառնալ նաև ձայնարկությունը.
Ապշած աչքերով այստեղ էլ տեսավ
Եթե ոչ արնոտ նույն ահն ու մահը,
Ապա *երկվորյակ* <u>ախն ու վախը</u> նույն... (79)

նույնիսկ՝ ընդհանրապես բառ չհանդիսացող վերջավորությունը.
Դո՛ւ ես, Նահապե՜տ, դու ես *այն* <u>յան-ը</u>,
Որ հայություն է հաղորդում նրանց... (228)

Մեր համոզմամբ՝ այս օրինակները կօգնեն նախ՝ *բառի փոխանվանական կիրառում* թեմայի ընթացքում ձեռքբերած գիտելիքներն ամրապնդել, ապա հասկանալի կդարձնեն սովորողին, թե ինչու է որոշիչը (նաև հատկացուցիչն ու բացահայտիչը) կոչվում ոչ թե գոյականի, այլ գոյականական անդամի լրացում:

ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ՝ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ՈՐՈՇԻՉՆԵՐՈՎ

Համարում ենք, որ սևակյան պատկերաստեղծման (հատկապես փոխաբերությունների, մակդիրների արտահայտման ձևերի) մասին խոսելիս անհրաժեշտ է անդրադառնալ նաև լեզվի պատկերավորման երկու այնպիսի միջոցների, ինչպիսիք են հակադրությունը և աստիճանավորումը, որոնք արտահայտված են պոեմում ամենատարբեր եղանակներով, բայց մանավանդ դրանց՝ որոշիչներով արտահայտված դեպքերը անչափ գեղեցիկ են, ուստի համարում ենք ուսումնասիրելու տեսանկյունից՝ կարևոր ու անհրաժեշտ:

* Հակադրություն (անտիթեզիս, հունարեն՝ ἀντί «հակառակ» + θέσις «դիրքորոշում» մասնիկներից, հունարեն՝ հակառակն ասել), բանադարձում, որը հանդիպում է գրավոր և բանավոր խոսքում կա՛մ որպես բառ/արտահայտություն, որ հակադրվում է մյուսներին կամ իմաստապես շրջում ավելի շուտ կիրառվածները, կա՛մ երբ երկու հակադիրներն օգտագործվում են միաժամանակ հակառակ տպավորություն ստեղծելու համար:

Բառական հակադրությունը միշտ պետք է պարունակի կրկնակի իմաստ, որպեսզի երկու միտք դրսևորվի մեկ արտահայտության մեջ: Մտքերը կարող են կառուցվածքային տեսանկյունից լինել հակադիր, սակայն նրանք պետք է լինեն գործնականորեն հակադիր, երբ երկու մտքերը համեմատվում են շեշտելու նպատակով:

Մենք կանդրադառնանք միայն այն հակադրություններին, որոնք արտահայտված են որոշիչներով:

Եվ իր անվան հետ թողեց մի արձան՝
Խոսուն,
Բայց անձայն՝
«Նուիրեալք անձինք»: (36)

Մեղեդիներ ու սաղմոսներ՝
Ոչ թե *մինչև վանքի գմբեթ*
Սուրբ խորանից երկարացած,
Այլ *բրածո և քարացած*... (22)

Բացի զուտ իմաստային պլանից հակադրություն ստեղծվել է նաև <u>բայց</u>, <u>ոչ թե...</u>, <u>այլ</u> շաղկապների միջոցով: Ընդ որում՝ առաջին օրինակում որոշիչները մենաբառ են, իսկ երկրորդ օրինակում՝ դերբայական դարձվածներով արտահայտված:

Եվ դարավոր մեր արյունը
Պատանորեն տաք պղպջաց,
Հին <u>ավիշը</u>, *նոր* <u>ավյունը</u>
Կրկին եռաց մեր բնի մեջ,
Անցավ ջարդված ճյուղքի միջով,-
Ու մեր *ծերուկ* <u>հոգին</u> ճչաց
Նորածինի զնգուն <u>ճիչով</u>: (223)

Այս հատվածում մի քանի տողում հակադրության երկու դրսևորում է առկա. նախ հակադրվում են տարբեր իրողություններ՝ որոշիչ-որոշյալ ամբողջականությամբ (*հին* ավիշ-*նոր* ավյուն), իսկ այնուհետև հակադրությունն առարկայանում է նույն իրողության՝ տարբերակվող-հակասական առանձնահատկությամբ՝ *ծերուկ* հոգին (ճչում է) *նորածնի* ճիչով:

...Ո՞վ էր այդ թաքուն-մեղավոր սիրո
Ահավոր *դժբախտ-երջանիկ* տերը ... (149)

Իսկ այստեղ նույն որոշյալը միաժամանակ լրացվում է հականիշ որոշիչներով, որոնք կապվում են միմյանց՝ որպես հակասական լիարժեքություն:

Վերև է ցցում.
Հիմա ո՞չ տավիղ,
Ո՞չ էլ *վերծանվող մեռած* խազերը: (31)

Այս դեպքում հեղինակը գծիկով չի միացրել *վերծանվող* ու *մեռած* դերբայները, բայց հակադրության տպավորությունը դրանից չի թուլանում:

Առաջարկում ենք որոշիչներով արտահայտված հակադրությունների ևս մի քանի օրինակներ.

Դու մեր *անթաղ*, բայց և *անփուտ*,
Տրոփասիրտ մեր սուրբ մումիա,
Թեկուզ *մարած*, բայց *վառվելիք*
Մեր հոգու ջահ հազարմոմյա... (225)

Միաժամանակ ուշադրություն ենք հրավիրում *տրոփասիրտ* և հատկապես՝ *հազարմոմյա* մակդիր-որոշիչներին:

Ու գերմարդկային-մայրական ցավով
Ավելացնում է թիվը աստղերի՜,-
Մի *սովորակա՛ն... անսովո՛ր* հրաշք: (133)

Վերստին ինքն իրեն հակադրվում է նույն որոշյալը: Այս անգամ բնութագրման անսպասելիությունը գրավոր խոսքում մարմնավորվել է կախման կետերի տեսքով:

Կարող են միմյանց հակադրվել նաև տարբեր իրողություններ (առարկաներ, հասկացություններ), այսինքն՝ հակասության արտահայտությունը վերաբերում է տարբեր որոշյալների.

Դու ես քարը
Եվ սրբատաշ մեր պատշարը.
Հացը օրվա
Եվ նեղ ժամի մեր պաշարը.
Մեր *փակ* հոգին, *բաց* աշխարհը... (241)

Ու Եվրոպան, որ գիտեր միայն ինչ-որ Արևելք՝
Միաշերտ ու միաշուրթ,
Դժոխքի պես *մոտակա*,
Դրախտի պես *հեռավոր*... (139)

Սևակ է պետք լինել՝ բացատրելու համար, թե դժոխքն ինչու է մոտ, իսկ դրախտն ինչու է հեռու:

Ի՞նչ էր արդյոք այն պատճառը,
Որ քեզ զատեց
Եվ անջատեց
Քո բախտակից ու սրտամոտ ընկերների դժխեմ բախտից՝
Քարկոծվողի *սուղ* դրախտից
Քեզ նետելով *մի յայն* դժոխք... (197)

Ու տեղներից վեր են թռչում
Թիկունքը *յայն* - մեջքը *բարակ*,
Բոյը թիլ-թիլ,
Բեղը ծիլ-ծիլ
Ջահել տղերք... (95)

* Աստիճանավորում (լատ.՝ gradatio) – որևէ դեպքի, եղելության կամ հոգեվիճակին վերաբերող հույզի, տրամադրության, խոսքի հետզհետե, աստիճանական խորացումը՝ ուժգնացումը կամ թուլացումն է: Այն խոսքին սաստկական երանգ է հաղորդում և ապահովում է հուզականություն ու արտահայտչականություն:

Պոլի՛ս, Պոլի՛ս...
Շքեղ ու ճոխ, չքնաղ ու պերճ,
Արծաթակուռ ու ոսկերիզ: (157)

Իսկ այդ ծերպերը տնքում են խեղճ-խեղճ
Լսողությունից բոլորովի՛ն զուրկ,
Երգ ու նվագից բա՛ն չհասկացող
Բարբարոս քամու պաղ մատների տակ,
Երգեհոնի պես նույն տակտն են տնքում... (200)

Թե՞ իսկապես երկինքն անգամ
Ողբում էր քեզ՝
Խաղա՛ղ-տրտո՛ւմ-հանգըստարա՛ր իր անձրևով... (238)

Հակառակությա՜ն ոգին էր խոսում,
Հակառակության այն *զարմանալի՜,*
Անիմանալի՜,
*Արտառո՛ց ո*գին... (82)

Դարպասներ բացեց՝
Ահեղ փորձության,
Եվ *զարմանալի՜, անհավատալի՜, ճշմարի՜տ* դեպքեր՝
Մահադարձությա՜ն... (19)

Կարծում ենք ավելորդ չէ հիշեցնել, որ պետք է ուշադրություն հրավիրել սաստկացում արտահայտող որոշիչների՝ միմյանց նկատմամբ դրսևորած «վերաբերմունքին». մի դեպքում դրանք միմյանցից տրոհվում են ստորակետով, մյուս դեպքում կարող են գծիկով միացված լինել:

ՈՐՈՇԻՉ ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

Որոշչի և որոշյալի թվային համաձայնության խնդիրներ

Հայերենում որոշիչ-որոշյալի կապակցության առվել տարածված եղանակը առդրությունն է, այսինքն՝ անկախ լրացյալի քերականական փոփոխություններից՝ որոշիչը մնում է ձևով անփոփոխ (հմմտ՝ կանաչ տերև, կանաչ տերևներով, կանաչ տերևից և այլն):

Սակայն կան դեպքեր, երբ որոշիչը՝ կախված նրա արտահայտած իմաստից, կամ որոշիչների քանակությունը պահանջում են որոշյալը կիրառել կոնկրետ որոշակի թվով:

Կարելի է վերոնշյալը բացատրելի դարձնել հետևյալ օրինակներով.

Մշուշն է սողում դաշտերի վրա
Ու պտույտ տալիս
Ծերուկների պես պպզած լեռների
Սանրը չտեսած-փոչոտ գլխի շուրջ: (47)

Այս օրինակում իրենց որոշիչներն ունեն և՛ գլխի (շուրջ) տեղի պարագան, և՛ դրա լեռների հատկացուցիչը: Լեռները(ի) բառը գործածված է հոգնակի թվով, քանի որ եթե ուշադրություն դարձնենք նրա որոշչին, ապա «կհայտնաբերենք» *ծերուկների պես* կապական կառույցը, որում արդեն իսկ հոգնակի թվով գործածված բաղադրիչ կա: Հասկանալի է դառնում, որ Սևակը չէր կարող *ծերուկների պես պպզած* որոշչին առդնել պարզապես լեռ(ան) ձևը, ուստի համաձայնեցրել է նրան որոշյալի թիվը՝ գործածելով հոգնակին: Իսկ հաջորդ որոշչային խումբը, թեկուզև բաղադրյալ է (արտահայտված դերբայով ու հարաբերական ածականով), սակայն այդ բաղադրությունն ընկալվում է որպես բառային մեկ միավոր, և հոգնակի դրվելու պահանջ իր լրացյալին չի ներկայացնում: Ուստի գլուխ որոշյալը ազատորեն կարող է դրվել ինչպես եզակի (այդպես էլ գործածված է պոեմում), այնպես էլ հոգնակի թվով:

Խորացված ուսման անհրաժեշտությամբ պայմանավորված (կամ առանձնակի ուսումնատենչ ու նպատակասլաց աշակերտների հետ աշխատելիս) կարելի է ավելի հանգամանորեն անդրադառնալ որոշիչ-որոշյալ համաձայնության խնդրին, անդարադառնալ ինչպես թվականներով կամ քանակ արտահայտող այլ բառերով կազմված որոշիչների, այնպես էլ քերականական այլ միջոցներով արտահայտված որոշյալների (օրինակ՝ որոշյալ կամ անորոշ առումներով կիրառության) թվի կազմության խնդրին:

Սովորողներին առաջադրանք - ինքնուրույն գտնել օրինակներ, որոնցում որոշյալը դրված է հոգնակի թվով, և բացատրել. արդյո՞ք հոգնակի թվով կիրառվելը բացատրվում է որոշչի առանձնահատկությամբ, թե՞ ուղղակի այդ

դեպքի համար հեղինակը նախընտրել է, որ նախադասության տվյալ՝ որոշյալ հանդիսացող անդամը դրվի հոգնակի թվով: Կարող է ինքը՝ ուսուցիչը տալ դուրս գրված օրինակներ՝ նույն հարցադրմամբ: Որպես օգնություն՝ առաջարկում ենք ներքոբերվող օրինակները, որոնցում որոշյալի հոգնակի թիվը պայմանավորված է որոշչի (որոշիչների) առանձնահատկություններով.

Վեր են ցատկում, գալիս շարվում իրար կողքի,
Եվ *թուխ-թանաք, և պատ-կտրիճ* տղամարդիկ
Պարսպվում են ու բըրգանում: (95)

Թե՞ ազատվելու հուսահատ ճիգով
Լող էին տալիս *հազա՛ր ու հազա՛ր* Վանա կատուները՝
Վառվող աչքերով... (209)

Պարեկների *ողկույզ-ողկույզ* մազերի մեջ
Մոլորվում է մեղվի նման բզբզացող աշնան քամին
Կամ պլլըվում նայողների վիզ ու լանջին՝ չխայթելով... (97)

Եվ սերկևիլ, տանձ ու խնձոր՝
Զատկին ներկած ձվերի պես *գունակ-գունակ*: (113)

Եվ Մայր Արաքս: Եվ Մայր Տաճար:
Տաճարի շուրջ՝ *սուրբ-սուրբ* վանքեր... (13)

Ու կեռացան-խոնարհվեցին *բյուր* գլուխներ... (237)

Այլև... *բոլոր* մեր զոհե՛րը միլիոնավոր,
Մեր *բյուրավոր* մեռելնե՛ր,
Որ մինչևիսկ չարժանացան... թաղման ծեսի (236)

Տրեխավոր, մաշիկավոր, բոբիկ ոտքով
Վանք են գնում
Հեռու-մոտիկ ամեն գյուղից: (92)

Վերջին օրինակի հետ կապված սովորողներին պետք է հիշեցնել, որ ամեն (ամեն մի), յուրաքանչյուր դերանունները պահանջում են, որ իրենց լրացյալը դրվի եզակի թվով, և եթե այդ նախադասության մեջ ամեն որոշիչը հանվի, ապա գյուղ բառը պարտադիր պետք է դրվի հոգնակի թվով՝ *հեռու-մոտիկ* որոշչի պահանջադրմամբ:

Հարկ ենք համարում ավելացնել, որ ածականի (կամ գոյականի) կրկնությամբ կազմված որոշիչ գործածելը, դեռևս չի նշանակում, որ դրանց որոշյալը պարտադիր պետք է դրվի հոգնակի թվով: Բոլոր դեպքերում հարկ է ուշադրություն դարձնել այդ կրկնավորի արտահայտած իմաստին:

Իբրև դատվածի,
Դատապարտվածի՝
Լերդ-լերդ արյունով ծեփելով բանտի դուռն ու պատերը... (149)
Կամ՝
Ա՜խ, նրա *հեռո՛ւ-հեռո՛ւ* հայրենիք...(67)

Որոշչի և նախադասության այլ անդամների շփոթում

Խնդիրների մյուս խումբը արդեն ընդհանուր-լեզվագիտական է և նախադասության անդամների ստույգ տարորոշման մասին է՝ նկատի առնելով այն դեպքերը, երբ առկա բառօգտագործումը (դա նաև կապակցություններին ու երկրորդական նախադասություններին է վերաբերում) շարահյուսական ընկալման տարբեր մոտեցումներ է առաջացնում՝ դասագրքային-գիտական և զգացմունքային-ընկալական, ու դրանով իսկ խառնաշփոթություն առաջացնում մշակված-համապարտադիր դարձած կանոններում ու տեսակետներում:

Դիցուք՝ արմատացած այն տեսակետը (որն արդեն նշել ենք, թե անձնական դերանունները ոչ դառնում են որոշիչ, և ոչ էլ որոշիչ լրացում են ընդունում:

Լեզվի հանրակրթական ծրագրում բացակայում է երկրորդական նախադասությունների բնույթ բաժինը (թեպետ, դրան հակառակ, ավարտական և միասնական քննությունների առաջադրանքներում դրանք առկա են. դա արդեն լրիվ այլ, առանձնապես հուզող, սակայն երկար տարիներ պատասխան չստացող խնդիր է, ու դուրս է սույն աշխատության համատեքստից), և դպրոցական շրջանակներում դրան առանձին անդրադարձ չկա:

Ասում ենք՝ առանձին, քանի որ 11-րդ դասարանում Բարդ ստորադասական նախադասության փոխակերպումը պարզ նախադասության թեմայի ուսումնասիրման ժամանակ, հպանցիկ, հարևանցի ակնարկ կա, թե ինչպես պետք է փոխակերպել որոշիչ երկրորդականները, սակայն դա կատարված է՝ առանց հատկանշելու[13]: Մենք արդեն նշել ենք, որ երկրորդական նախադասությունների քննարկումը դուրս է սույն աշխատության շրջանակներից, սակայն դա կարևորում ենք այլ տեսանկյունից.

երբեմն դերբայական դարձվածով կամ կամ ոչ դարձվածային կապակցությամբ արտահայտված անդամը տեսականորեն դժվար է լինում տարբերակել, թե նախադասության ինչ անդամ է, և հարկ է լինում այդ կապակցությունը «վերադարձնել» իր երկրորդականով արտահայտված տեսքին, կամ էլ պարզապես հարկ է լինում ստորոգյալ «ներմուծել»՝ առավել ընկալելի դարձնելու նպատակով:

Հիմա դառնանք անձնական դերանունների՝ որոշիչներ ընդունելու կամ չընդունելու հանգամանքին՝ պարզաբանելով նաև, թե ինչու ակնարկեցինք երկրորդականների բնույթի թեման:

Ահա նախադասություն.

Տղան, *որ խաղում էր շնիկի հետ*, ձայն տվեց ինձ:

Բնույթով ինչպիսի՞ նախադասություն է ընդգծված երկրորդականը: Հասկանալի է, որ որոշիչ: Հիմա տղա գոյականի փոխարեն գործածենք նա դերանունը. Նա, որ խաղում էր շնիկի հետ, ձայն տվեց ինձ:

Փոխվու՞մ է երկրորդականի բնույթը, թե՞ մնում է նույնը: Եթե փոխվում է, ապա դա նշանակում է, որ նախադասության նույն անդամի բնույթի (ասել է, թե՝ քերականական պաշտոնի) փոփոխման պատճառը միայն լրացյալի՝ խոսքիմասային պատկանելության փոփոխումն է (ընդ որում խոսքը չի վերաբերում գոյականական ու բայական անդամների՝ միմյանց փոխարինմանը, այլ նույն՝ գոյականական անդամի տարբեր խոսքիմասային դրսևորումներին), ինչն անհեթեթություն է: Բայց եթե չի փոխվում, ապա նշանակում է՝ անձնական դերանունը որոշիչ լրացում ընդունում է:

Այս նախաբանի անհրաժեշտությունը հետևյալն է.

- Որպես ի՞նչ դիտել անձնական դերանվանը ստորադասվող լրացումները, կամ ընդհանրապես նախադասության՝ դրան հաջորդող հատվածը, որոնք դերանունից տրոհվում են բութ կետադրական նշանով:

Քննարկվող պոեմից բերենք մի քանի օրինակներ.

Միշտ նա է ներկա,
Նա՛՝
Ճինականի հար հավատարիմ,
Հավետ անբաժան
Մեծ օգնականը.
Նա՛՝
Ճինականի համկալ-ընկերը,
Հոտաղ-մշակը
Ու... երրորդ ձեռքը.
Նա՛՝
Ինքը... ե՛րգը:

[13] Տես՝ Լ.Եզեկյան, Ա.Սարգսյան, Ռ. Սաքապետոյան «Հայոց լեզու», 11-րդ դասարան, «Մանմար», Երևան, 2010թ., էջ 163-165:

Բերված հատվածում երեք անգամ կիրառված նա դերանունը (ենթակա) բոլոր դեպքերում էլ բացահայտյալ է, և նրան լրացնող անդամները՝ բառերն ու բառախմբերը, բոլոր դեպքերում էլ բացահայտիչ են:

Իսկ այս հատվածում՝

Եվ ամենքըս մեր աչքին
Երևացինք աշակերտ,
Իսկ դու՝ երգի դասարան: (136)

երրորդ տողը ակնահայտորեն զեղչված ստորոգյալով (հանգույցով) թերի (երկկազմ) նախադասություն է, քանի որ ընկալելի է *երևացիր* հանգույցի զեղչված-վերականգնելի լինելը:

Բայց՝

Պոլի՛ս, Պոլի՛ս...
Դու՝ դիվասիրտ-հրեշտակադեմ,
Ներսից՝ գեհեն,
Դրսից՝ եդեմ,
Կերտված ձեռքով մարդակերպար սատանայի... (158)
(հակադրության ևս մեկ օրինակ)

հատվածը վիճարկման տեղիք է տալիս.

ա/ բերվածը զեղչված ստորոգյալով (հանգույցով) երկկազմ նախադասություն է;
բ/ բերվածը անդեմ անվանական նախադասություն է:

Եթե դիտարկենք տվյալ նախադասությունը որպես զեղչված հանգույցով նախադասություն (իսկ նման կառույցները պոեմում անչափ շատ են), ապա մենք դրանով սաստիկ կնեղացնենք բացահայտիչ լրացման գործնական նշանակությունը, քանի որ ցանկացած բուն բացահայտիչ կարող ենք դիտել այդ ենթատեքստում: Ասել է, թե՝ բացահայտիչ լրացումը որպես նախադասության առանձին անդամ համարելը ավելորդ լեզվագիտական տքնանքի արդյունք է միայն:

Հաջորդ կռվանը, որ առաջարկում ենք հօգուտ բերված նախադասության անվանական անդեմ լինելու, այն է, համաձայն որի հենց անվանական անդեմ նախադասություններ լեզվում պետք է որ չլինեն (այդպիսի նախադասությունների գոյության հերքում), քանի որ ստորոգման նյուանս դրանցից յուրաքանչյուրում կա, և պակասող հանգույցը հեշտությամբ դնելով ստանում ենք դիմավոր բայով նախադասություն (անենթակա միակա՞զմ, թե՞ երկկազմ – արդեն լրիվ ուրիշ խնդիր է): Մենք հակված ենք դրանք որպես անվանական անդեմ (միակազմ) նախադասություն դիտելուն:

Բայց բերված հատվածը որպես միակազմ նախադասություն դիտելու դեպքում էլ մեկ այլ հակասություն է առաջանում. Դու դերանվանը հաջորդող բոլոր անդամները որոշի՞չ են, թե՞ բացահայտիչ:

Դիտարկենք մեկ այլ օրինակ.

Եվ ուներ նա սի՛րտ՝ *սիրելո՛ւ համար*,
Մի սիրտ՝ *գերվելով տիրելու համար*,
Մի սիրտ՝ *սե՛ր համակ*,
Մի սիրտ՝ *սիրո ծո՛վ*,
Իսկ ինքը *սիրուց հավիտյա՛ն ցամաք*:
Ինքը՝ *սիրուց սո՛վ*,
Ինքը՝ *մենակյաց ու կուսակրոն՝*
Ինքն իրեն ծյուրող մի սիրո կերոն... (148)

Եթե սիրտ բառին հաջորդող բոլոր չորս արտահայտություններն էլ որոշիչ համարելու մեջ որևէ խնդիր կարծես թե չի առաջանում, ապա ինքը դերանվան դեպքում նրան հաջորդող կապակցությունների խնդիրը մնում է բաց՝ զեղչված հանգույցով երկկա՞զմ, բացահայտի՞չ, թե՞ որոշիչ: Իհարկե, մենք հակված ենք դրանք բոլորն էլ որպես որոշիչ դիտարկելուն, բայց այդ դեպքում ևս խնդրահարույց է դառնում դրանց լրացյալը՝ ինքը դերանունը, որը պետք է որ որոշիչ չընդունի:

Մենք ուշադրություն ենք հրավիրում նաև այն հանգամանքի վրա, որ *Իսկ ինքը սիրուց հավիտյա՜ն ցամաք* տողում ինքը դերանվան վրա բութ չկա, ու չենք կարող ասել՝ դա հեղինակային մտահղացու՞մ է, թե՞ տպագրական վրիպակ: (Այդ բութը բացակայում է ամենուրեք՝ թե՛ տպագիր գրքային, թե՛ էլեկտրոնային տարբերակներում)

Դու՝ *երազկոտ*, և չիմացար,
Ա՛խ, որտեղի՞ց իմանայիր... (226)

Այստեղ անտարակույս դժվար կլինի *երազկոտ* բառի համար մեկ այլ պաշտոն՝ բացի որոշչից, թույլատրելի ու վերաբերելի համարել:

Էլ ավելի խնդրահարույց է հետևյալ օրինակը.

Մե՞նք ենք՝ *այսքա՜ն վայելուչ,*
Այսպես կոկի՜կ, հարդարվա՜ծ,
Գոհարներո՛վ զարդարվա՜ծ:
Չկշտացա՛նք նայելուց... (136)

Արձանագրե՞նք, որ թեք շրիֆտով գրված բոլոր անդամները որոշիչ են, թե՞ այլ տարբերակներ ևս առաջարկենք: Ի՞նչ: Ուրախ կլինենք, եթե մեր հարցադրումները լսված ու արձագանքված լինեն:

Որոշիչ-բացահայտիչ վեճը ակտուալ է նաև ահա այսպիսի կառույցներում.

Մի մարդ էր,
Սակայն ինքն էր մի ամբողջ կոնսերվատորիա՝
Երգիչ, նվագող,
Խաղեր հավաքող,
Որքան խմբավար՝
Նույնքան ուսուցիչ,
Որքան հնագետ՝
Մեռած խաղերի գաղտնիքը լուծող,
Նույնքան պատմաբան՝
Դարավոր երգի մայրուղին գծող.
Եվ մի երգահան, և մի տաղաստեղծ... (162)

Որոշիչը, կախված որոշյալի ու ստորոգյալի (եթե ստորոգյալին չի լրացնում) նկատմամբ իր գբաղեցրած դիրքից, կարող է շփոթեցվել նաև ձևի պարագայի հետ:

Մարդիկ օղուն գինին խառնում
Ու *մոռացած դարդ ու ցավեր՝*
Հանձնվում են ուրախության: (109)

Եթե մեջբերվածում ընդգծվածն ակնհայտորեն ձևի պարագա է, քանի որ լրացնում է հանձնվում են ստորոգյալին (և ոչ թե մարդիկ ենթակային), դա է հուշում նաև դերբայական դարձվածի՝ բութով անջատվելը իր լրացյալից, ապա հաջորդ օրինակում ամեն ինչ այդքան միանշանակ չէ.

Ու պահակ են դառնում *անվարձ*
Ամեն տեսակ պաղ-պաղ հողմեր... (106)

Անվարձ անդամը որոշի՞չ է, թե՞ ձևի պարագա: Ինչպե՞ս օգնել սովորողին նման դեպքերում: Խնդիրն ավելի է բարդանում, եթե նկատի ունենանք, որ նախադասության ստորոգյալը բաղադրյալ է (դառնալ օժանդակ բայը կատարում է հանգույցի դեր): Այսինքն՝ սովորողի համար պետք է հստակ լինի՝ անվարձ *ի՞նչ են անում*, թե՞ անվարձ *ինչե՞ր*:

Տան առաջնեկ գառը՝ *կապված էշի վզից,*
Առաջ վազում, կախ է ընկնում, շուրջը նայում... (93)

Այս օրինակում ևս կետադրությունն օգնում է նախադասության անդամի ճիշտ տարորոշմանը, և *էշի վզից կապված* գա՞ռը, թե՞ *էշի վզից կապված* է առաջ վազում հարցադրումը լուծվում է հօգուտ որոշչի:

Այսպիսի դեպքեր պոեմում շատ են, և մենք առաջարկում ենք, հատկապես՝ ձևի պարագա թեման ուսումնասիրելիս, սովորողներին հանձնարարել (որպեսզի ավելի հեշտ լինի, պետք է նախապես ճշտել և առաջադրանքը սահմանափակել

մեկ-երկու դողանջի սահմաններում), որ նրանք ինքնուրույն գտնեն այսպիսի դեպքեր ու ինքնուրույն վերլուծեն, կամ էլ համապատասխան օրինակներով քարտեր բաժանել խմբերին՝ պահանջելով տարորոշել որոշիչ-ձևի պարագա անդամներով օրինակները:

Որոշչի ու որոշյալի՝ միմյանց նկատմամբ ունեցած դիրքի առնչությամբ առաջացող, ինչպես նաև նույն որոշյալին լրացնող որոշիչների շարադասության հետ կապված խնդիրներ

Հայերենի սովորական շարադասության համաձայն՝ որոշիչը (որոշիչները) նախորդում է որոշյալին: Սակայն շատ հանգամանքներում, հատկապես՝ չափածո ստեղծագործություններում, այդ դրույթը չի գործում. որոշիչները կարող են իրենց լրացյալին և՛ նախորդել, և՛ հաջորդել, ինչպես նաև որոշիչն ընդհանրապես իր որոշյալի կողքին կարող է չլինել:

Դիտարկենք օրինակներով.

Իր *«ամենագութ»* ձեռքով *ցարական*
Հայոց պատմությունն, իբրև առարկա,
Արգելեց բոլոր հայ դպրոցներում... (19)

<u>Ձեռք(ով)</u> բառի (միջոցի խնդիր) երկու որոշիչները տեղավորված են նրա երկու կողմերում՝ մինչև և հետո:

Տեղին է հիշեցնել, որ հետադաս ծավալուն որոշիչները իրենց լրացյալից գրավոր խոսքում տրոհվում են բութով.

Մինչդեռ անվտանգ խուցի դարակին
Ենջում են տաղեր՝ *կարոտ հորինման*... (29)

կամ՝

Իսկ խազից զատ կան խաղ ու տաղ՝
Կենսաթրթիռ, լուսաթաթախ... (33)

Դա այն դեպքում, երբ որոշիչը անմիջապես կից է իր լրացյալին: Սակայն սակավ չեն այն դեպքերը, երբ որոշիչը հեռանում է որոշյալից: Հեռացման «պատճառը» առավելապես լինում է իր դիրքը փոխած հատկացուցիչը (հայերենի սովորական շարադասությամբ՝ հատկացուցիչը նույնպես ընկած է լինում հատկացյալից առաջ, և եթե նույն լրացյալը ունենում է և հատկացուցիչ, և որոշիչ լրացումներ, ապա հատկացուցիչը նախորդում է որոշչին):

Մինչ մոլեռանդի <u>նայվածքը</u> նրա՝
Որքան ներհայաց-նույնքան բևեռուն,
Չի մեխվում սրա կամ նրա վրա,
Այլ պեղում կարծես անծանոթ հեռուն: (64)

Որքան ներհայաց-նույնքան բևեռուն որոշիչը լրացնում է <u>նայվածք(ը)</u> ենթակային, սակայն նրանից առանձնացվել-հեռացել է <u>նրա</u> հատկացուցչով:

Կամ՝

...*Շողերով հինված* իր <u>գորգը</u> թողել,
Առվի արծաթով երեսը ցողել,
Կանգնել է ճամփին մի շաղոտ Շողեր... (158)

Կամ

Պետք էր կոկորդ ու ոգի,
Որ *տաղ դարձած* մեր <u>հոգին</u>
Համերգանար ամեն կողմ: (135)

Երբեմն որոշիչը բաժանված է լինում իր որոշյալից նախադասության այլ անդամներով.

<u>Ձեռքերն</u> այնժամ *հեզ ու հլու*՝
Երկու հոգնած աղավնու պես՝
Թևը ծալած կուչ են գալիս... (122)

Հեզ ու հլու որոշիչը ձեռքեր որոշյալից բաժանված է այնժամ պարագայով: Թեպետ այս պարագայում կարող է ևս մի կարծիք հնչել, թե *հեզ ու հլու*-ն ոչ թե լրացնում է ձեռքեր-ին, այլ աղավնու-ն, և դեռ ավելին՝ կուչ են գալիս ստորոգյալին, այսինքն՝ ձևի պարագա է:

Եվ մեկը պիտի գար ահա,
Մեզ նորից կայծակը տար *թուր*
Ու թամբեր Քուռկիկ Զալալի...(60)

Թուր որոշիչը կայծակ(ը) ուղիղ խնդիր որոշյալից անջատված-հեռացված է տար ստորոգյալով:

Իսկ այս մի հատվածում՝

Արժանի ժառանգ
Գողթան գավառի հայ գուսանների,
Փողհար-փանդռահար վիպասանների՝
Օտարի շնչից զանազանելի,
Այդքանով՝ նաև անհասանելի... (11-12)

միանգամից չի ընկալվում՝ *Օտարի շնչից զանազանելի, Այդքանով՝ նաև անհասանելի* որոշչային խումբը լրացնում է գուսանների, վիպասանների հատկացուցիչների՞ն, թե՞ նրանց հատկացյալ ժառանգ գերադաս անդամին:

Կարծում ենք արժե և անհրաժեշտ է անդրադառնալ նաև նույն որոշյալի որոշիչների՝ միմյանց նկատմամբ ունեցած հաջորդականության (շարադասության) ու կետադրության հարցերին:

Արդեն նշեցինք, որ հետադաս ծավալուն որոշիչը տրոհվում է բութով: Նախադաս դիրքում որոշիչներն իրենց անմիջապես հաջորդող որոշյալից ոչ մի կերպ չեն տրոհվում:

Որոշիչները միմյանցից կարող են տրոհվել և չտրոհվել: Դա բացատրելի լինելու նպատակով անհրաժեշտ է նախ ընկալելի դարձնել համասեռ և տարասեռ որոշիչներ հասկացությունները:

Համասեռ են կոչվում այն որոշիչները, որոնք բնութագրում են իրենց լրացման օբյեկտը մի կողմից, նույն կամ նման հատկություններ են արտացոլում: Տարասեռ որոշիչները բնութագրում են իրենց լրացյալին տարբեր, միմյանց հետ անհամեմատելի կողմերից:

Նույն որոշյալին լրացնող որոշիչների համար էական նշանակություն ունի նաև նրանց հերթականությունը՝ որոշյալին ավելի մոտ կամ նրանից ավելի հեռու գտնվելու հանգամանքը: Համասեռ որոշիչների դեպքում նրանց հերթականությունը էական նշանակություն է ունենում միայն որոշակի ոճական դեպքերում (օրինակ՝ մեր նշած աստիճանավորման, հակադրման ժամանակ): Սովորական դեպքերում էական չէ դրանց՝ միմյանցից հետուառաջ գտնվելը:

Խնդիրն այլ է տարասեռ որոշիչների գործածության ժամանակ: Որոշիչների հերթագայությունը ունի իմաստային-կիրառական նշանակություն, և նպատակ ունի ընկալման խճողումներ չառաջացնելու:

Բերենք օրինակ և փորձենք այդ պնդումը հաստատել.

Ջաղացից աղուն բերող
Ալրոտված խեղճ գյուղացուն
Իր սայլը դագաղ դարձավ,
Ալյուրը՝ արնոտ պատան... (186)

Գյուղացի (գյուղացուն) որոշյալին միաժամանակ լրացնում են երեք *տարասեռ* որոշիչներ, որոնցից մեկն արտահայտված է դերբայական դարձվածով՝ *ջաղացից աղուն բերող* (ցույց է տալիս գործողության կատարման ընթացքի մեջ գտնվող հատկանիշ), մեկն արտահայտված է մենաբառ դերբայով՝ *ալրոտված* (բնութագրում-նկարագրում է մարդու արտաքինը), մեկն էլ՝ ածականով՝ *խեղճ* (անձնական որակային հատկություն է ցույց տալիս): Այստեղ ակնհայտ է, որ դերբայական դարձվածով արտահայտվածը պետք է մյուսների նկատմամբ նախադաս լինի, քանի որ բավական է մյուս որոշիչները տեղափոխել դարձվածից առաջ, անմիջապես իմաստային խճողման կամ լրացյալի փոփոխման խնդիրներ կառաջանան:

Կարելի է սովորողներին առաջարկել ինքնուրույն դա կատարել՝ իմաստային շեղումներ թույլ չտալու անհրաժեշտության մեջ համոզվելու համար:

Դասագրքային են ու գիտականորեն մշակված են նույն որոշյալին լրացնող որոշիչների հերթագայության ընդհանուր սկզբունքները, ինչպիսիք են՝

դրվում է նախ թվականով, ապա ածականով արտահայտվածը,

դրվում է նախ դերբայով, ապա ածականով արտահայտվածը,

դրվում է նախ՝ հարաբերական ածականով, ապա որակականով արտահայտվածը, և այսպիսի այլ շարադասական պահանջներ, ինչպես՝ հատկացուցչի՝ որոշչից առաջ լինելու պահանջը:

Սևակը մեծ մասամբ այդպես էլ վարվել է պոեմը երկնելիս, սակայն ինչպես ցույց տվեցինք որոշիչ-հատկացուցիչ շարադասության շրջման դեպքերով, այլ ծագման որոշիչների կիրառումը ևս սևակյան տրամաբանության համաձայն, ինչպես նաև չափածոյին հատուկ տաղաչափական նորմերի պահանջով, հաճախ չի ենթարկվում ընդհանուր օրինաչափություններին.

Ահա՛, դերբայը (ընդգծված է) իր առաջնության տեղը զիջում է ածականներին.

Նրբաճաշակ-բարեսուն
<u>Երեսառած</u> Փարիզում
Բեմին բուսնեց ու ճոճվեց տղամարդկանց պարի սյուն... (138)

Հատկացուցիչը (ընդգծված է) դառնում է միայնակ, առանց որոշիչների հետադաս.

Ներընդունած *կազդուրիչ ինչ-որ առողջ* շիթ <u>արյան</u>,
Քեզ լսելով, Վարդապե՜տ, ջահելացա՛վ Իտալիան... (138)

Որակական ածականը հանգիստ տեղավորվում է հարաբերականից (ընդգծված է) առաջ, ու դրանից խոսքն իր համնուհոտը չի կորցնում.

Իսկ մեջքակոտրուկ մեղու և պիծակ
Համերգ են տալիս անփող ու ձրի
Բնության *հսկա* <u>անքեմ</u> տաճարում... (140-141)

Ավելի մեծ ծավալ մատնանշող ածականը հաջորդում է սոսկ ձև արտահայտող ածականին.

Որ *նորաձև* <u>եվրոպական</u> տարազի տակ
Առժամանակ ծածկում էին ճանկ ու ժանիք... (158)

Եթե այսօր ուսանողները կամ աշակերտները նման շարադասությունը ճիշտ համարեն, հաստատ նրանց ցածր կնշանակեն: Որպես մեր պնդման հիմնավորում՝ տասնյակ օրինակներ կարող ենք բերել ավարտական/միասնական քննությունների համար նախատեսված առաջադրանքների շտեմարաններից: Ուստի այստեղ կարևորում ենք նաև այն, որ չափածո խոսքն իր բազմաթիվ առանձնահատկություններով տարբերվում է արձակ խոսքից, և չափածոյի լեզվական, հատկապես՝ քերականական նրբությունները սովորողները պետք է կարողանան ընկալել ու գնահատել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատության մեջ հեղինակը փորձել է հիմնավորել, որ *Որոշիչ* թեման հնարավոր է ուսումնասիրել Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի օգնությամբ ու միջոցով:

Պոեմը անսպառ հնարավորություններ է տալիս ոչ միայն որոշիչների ու նախադասության այլ անդամների ուսուցումը կազմակերպելու, այլև լեզվի ուսումնասիրության ամենատարբեր առումներով, ուսուցողական պարարտ հող կարող է նախապատրաստել դասավանդման բոլոր մակարդակներում: Բացի դա և՛ 8-րդ, և՛ 11-րդ դասարանների աշակերտները, և՛ ուսանողներն ու ասպիրանտները հնարավորություն են ստանում բարձրաժեք արվեստի հետ հաղորդակցվելու, իրենց բառապաշարները հարստացնելու ու պարզապես գեղագիտական հաճույք ստանալու:

Ցույց ենք տվել, թե ինչպես, խոսքային ինչպիսի միջոցներով կարող է արտահայտվել որոշիչը՝ պոեմից բերելով համապատասխան օրինակներ, նաև շոշափել ենք որոշչին վերաբերող և հարակից այլ խնդիրներ, որոնք դեռևս տարակարծության պատճառներ են հանդիսանում:

Հեղինակը հույս է հայտնում, որ սույն աշխատանքը կարող է օժանդակել ուսուցման կազմակերպմանն ու գիտականացմանը, ինչպես նաև կնպաստի որոշ կնճռոտ հարցերի շուրջ մասնագետների տեսակետների հստակեցմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Պարույր Սևակ «Անլռելի զանգակատուն», Երևան, «Խորհրդային գրող», 1990:

2. Հովհաննես Բարսեղյան, Փառանձեմ Մելթիխանյան «Հայոց լեզու», 8-րդ դասարան, «Աստղիկ գրատուն», Երևան, 2017թ.:

3. Լ.Եզեկյան, Ա.Սարգսյան, Ռ. Սաքապետոյան «Հայոց լեզու», 11-րդ դասարան, «Մանմար», Երևան, 2010թ.:

4. Արտաշես Պապոյան, Խաչիկ Բաղիկյան, «Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն» , Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2003 թ.:

5. Հրանտ Պետրոսյան, «Հայրենագիտական բառարան», Երևան, «Հայաստան» հրատարակչություն, 1987թ.:

6. Մանուկ Աբեղյան, «Հայոց լեզվի տեսություն»,Երևան, 1965թ.: